

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գագիկ Տեր-Չարությունյան

Հայության մի զգալի մասը, տարբեր գնահատականներով՝ 10-20 տուկոսը, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ չեն: Այդ պատճառով այդ հատվածի վերաբերյալ զարգացած փորձագիտական պատկերացումների ձեւավորումն ավելի քան հրատապ խնդիր է եւ անմիջականորեն առնչվում է հոգեւոր անվտանգության ոլորտի հետ: Միեւնույն ժամանակ, այդ ոլորտի հարցերն անմիջապես առնչվում են.

- Սփյուռքի անվտանգության հետ. հայտնի է, որ տարադավան եւ տարակրոն հայերի զգալի մասը բնակվում է ՀՀ եւ ԼՂՀ սահմաններից դուրս:

- Հայաստանի ներքաղաքական խնդիրներին՝ կապված աղանդավորական արտահայտումների, տարադավան հատվածների փոխհարաբերությունների եւ այլ խնդիրների հետ:

- Արտաքին քաղաքական զարգացումների հետ՝ հաշվի առնելով տարակրոն եւ տարադավան հայության ներկայությունը եւ քաղաքական ներուժը Սփյուռքում եւ հատկապես Մերձավոր Արեւելքում:

Հայության կրոնադավանական հատվածների ուսումնասիրությունը նաեւ դասական հայագիտության կարեւոր բաղկացուցիչներից է. այն ներառում է հայոց պատմությանը ներհյուսված հարուստ պատմագրություն, աստվածաբանական հարցերի մեկնություններ եւ այլն: Նման բնույթի խնդիրների ուսումնասիրությունն ունի խոր պատմական ավանդույթներ եւ հսկայական դերակատարում մեր ինքնաճանաչողության հարցում: Դրան զուգահեռ՝ վերջին տարիներին հայրենական տեղեկատվական դաշտում կարելի է նկատել «գիտականության» շղարշի ներքո որոշ սուբյեկտիվ պատկերացումների ներմուծում:

«Ով է հայը»

Մասնավորապես, փորձեր են կատարվում տալ «հայ» լինելու ձեւակերպումներ՝ դնելով կրոնադավանական կամ լեզվական նախապայմաններ: «Ով է հայ, ով հայ չէ» խնդիրը չունի եւ չի կարող ունենալ լուծում մաթեմատիկական բանաձեւի տեսքով, ինչպես որ չկան նման

բանաձեւեր բարդ պատմական-հասարակական երեւոյթների համար: «Հայ» ֆենոմենը բազմաշերտ է, եւ այդ խնդրի լուծումն ամեն մի առանձին դեպքում պետք է թողնել կոնկրետ անձի զգացողութեանը, հայկական հանրութեան գնահատականին, պետական ծառայութիւնների կամ եկեղեցու մոտեցումներին: Սա այն խնդիրն է, երբ կոնկրետացման փորձերը եւ մտավարժանքները կարող են տանել միայն փակուղի: Տեղին է մեջբերել ԶԶ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքերը՝ արտասանված Նյու Յորքում, ամերիկահայ առաջատար կազմակերպութիւնների կողմից իր պատվին կազմակերպված հանդիսավոր ընդունելութեան ժամանակ. *«Անգլիախոս, թուրքախոս, ռուսախոս կամ հայախոս հայը, առաքելական, կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական հայը, սոցիալիստ կամ ժողովրդավար հայը, ազատական կամ ազգայնական հայը՝ պարզապէս հայ է... Ընկալում ենք արդյոք, որ մշակութային, լեզվական, կրոնական բազմադեմութիւնը արատ չէ ամենեւին, որի դեմ պետք է պայքարել, այլ հայութեանը տրված առավելութիւն է, որ յուրահատուկ հնարավորութիւններ է ընձեռում»:*

Հարկ է նաեւ հաշվի առնել, որ այսօր մենք ապրում ենք խոշոր փոփոխութիւնների դարաշրջանում, եւ այդ փոփոխութիւններն անմիջականորեն վերաբերում են նաեւ հոգեւոր-կրոնական ոլորտին: Ակնհայտ է, որ առանց այդ փոփոխվող աշխարհի տրամաբանութեան իմացութեան մեզ խիստ դժվար կլինի ադեկվատ գործել արդի գլոբալացված, փոխկապակցված աշխարհում, որը բավական կոշտ է արձագանքում մեկուսացման միտումներին:

«Պոստսեկուլյար», բայց ոչ հոգեւոր աշխարհ

Ներկայիս դարաշրջանը, արդի հասարակագիտութեան մոտեցումների համաձայն, համարվում է «պոստսեկուլյար» («հետաշխարհիկ»): Որ նման ձեւակերպումը համընկնում է առկա իրողութիւնների հետ՝ վկայում է, մասնավորապէս, այն փաստը, որ ամեն տարի մոտ 105 հազար քրիստոնյա է նահատակվում կրոնական պատկանելութեան համար: Հաշվարկված է նաեւ, որ ներկայումս կրոնական հատկանիշներից ելնելով՝ աշխարհում (հատկապէս Մերձավոր Արեւելքում, Հյուսիսային Աֆրիկայում եւ Հարավարեւելյան Ասիայում, Կենտրոնական եւ Հարավային Աֆրիկայի երկրներում եւ Հնդկաստանում) հալածանքների է ենթարկվում մոտ 100 մլն քրիստոնյա եւ մոտ 35 մլն այլ կրոնների ներկայացուցիչներ (այս վերջինի առիթով հատուկ հիշենք իսլամի ներսում շիաների եւ սուննիների միջեւ արյունալի հակամարտութիւնները):

Կրոնական խնդիրների կարելորունը 21-րդ դարում պետք է ընդունել որպես յուրահատուկ «կոմպենսացիոն մեխանիզմ», որը կոչված է լրացնելու արդի հանրություններին բնորոշ հոգեւոր վակուումը: Սակայն «պոստսեկուլյար» աշխարհը պարունակում է նաեւ որոշակի ռիսկեր: Կա, մասնավորապես, երկու վտանգ՝ աշխարհաքաղաքական եւ հասարակական, որոնց արժեք անդրադառնալ:

«Պոստսեկուլյար» դարաշրջանի սկիզբը փորձագիտական հանրությունն անմիջականորեն կապում է ԽՍՀՄ փլուզման եւ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետ: Վերջինս պատերազմ ազդարարեց ծայրահեղ իսլամիզմի դեմ, որը միայն պայմանականորեն ստացավ «հակաահաբեկչական պատերազմ» անվանումը: Այդ գլոբալ իրադարձությունների շարունակությունը պետք է համարել նաեւ այն, ինչ այսօր կատարվում է արաբական աշխարհում: Մասնավորապես, այդ տարածաշրջանում տեղի է ունենում քաղաքական իսլամի կամ, այլ խոսքերով՝ թեոկրատիկ ռեժիմների վերադարձ: Դրանք առայժմ ենթարկվում են «չափավոր իսլամի» տրամաբանությանը: Սակայն նման ռեժիմները, ինչպես հետեւում է ներկայիս Թուրքիայում ընթացող իսլամի ռադիկալացումից, ոչ հեռու ապագայում տեղաշարժվելու են դեպի ավելի ծայրահեղ արտահայտումներ՝ այստեղից բխող բոլոր հետեւանքներով:

Ըստ ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի եւ ԵՄ Անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտի մշակումների, մոտ ապագայում հնարավոր է, որ աշխարհը «ֆրագմենտացվի» եւ, մասնավորապես, ձեւավորվի մեկուսացված Իսլամական աշխարհի, որը մենք տեսնում ենք մերձավորարեւելյան զարգացումների համատեքստում եւ ինչն անմիջականորեն առնչվում է ոչ միայն մեր հայրենակիցների ճակատագրի, այլեւ ԶԶ եւ ԼՂԶ անվտանգության խնդիրների հետ: Թերեւս, կարելի է փաստել, որ Սամյուել Զանթինգտոնի «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգն այսօր նոր հիմնավորումներ է ստանում:

Երկրորդ վտանգն այն է, որ հոգեւոր, մասնավորապես՝ քրիստոնեական սկզբունքները վերահաստատվում են արդի սպառողական, այսպես կոչված՝ «կոնսյումերիստական» հասարակարգում, որի գլխավոր դերակատարը ոչ հոգեւոր, խիստ նյութականացված մտածելակերպ ունեցող Homo economicus-ն է: Այսինքն՝ կրոնական պատկերացումները կարծես ներդրվում են հոգեւոր սկզբունքները ժխտող սոցիումում, ինչը տարաբնույթ է ոչ միշտ դրական երեւույթների տեղիք է տալիս: Դրան զուգահեռ՝ պետք է հաշվի առնել, որ հոգեւոր դասը նույնպես կրում է ժամանակի կնիքը, եւ երբեմն «պոստսեկուլյար» գործընթացներն ընդունում են զուտ ծեսերի բացարձակացման բնույթ: Դա, իր հերթին, հրահրում է, այսպես

կոչված, կղերականացման գործընթացներ, ինչը նույնքան անթույլատրելի է, որքան եւ հոգեւոր սկզբունքների ժխտումը (այս առիթով հիշենք ինդուլգենցիայի կամ վճարում կատարելու միջոցով «մեղքերի թողութուն» ստանալու միջնադարյան նախադեպը): Նման երեւոյթները հասարակական ընդվզումների առիթ են հանդիսանում, եւ, օրինակ, անգամ Լեհաստանի նման կաթոլիկ ավանդույթներ ունեցող երկրում 2011թ. խորհրդարանական ընտրութուններում մոտ 10% ձայն (40 պատգամավոր) հավաքեց հակակղերական ուղղվածութուն ունեցող «Պալիկոտի շարժում» կուսակցութունը:

Հոգեւոր-կրոնական ոլորտում կատարվող գործընթացների մաս պետք է համարել նաեւ այն գործընթացները, որոնք կապված են այսօր մեծ հնչեղութուն ստացած «մուլտիկուլտուրալիզմի» քաղաքականութեան հետ:

«Մուլտիկուլտուրալիզմ». քաղաքակրթութուն եւ քաղաքականութուն

Ինչպես հայտնի է, քաղաքակրթական գիտակցութեան կարեւորագոյն մաս կազմող կրոնական գիտակցութունն ունի խոր հիմքեր եւ դժվար է ենթարկվում փոփոխութունների: Թերեւս, այդ հանգամանքն է, որ ընկած է Եվրոպայում այսօր խոր ճգնաժամ ապրող բազմամշակութայնութեան քաղաքականութեան հենքում: Այս իրողութունը երբեմն առիթ է հանդիսանում, որպէսզի հայկական հանրութունը նույնպէս դիտարկվի մուլտիկուլտուրալիզմի տրամաբանութեամբ: Մասնավորապէս, սփյուռքի հայութեանը բնորոշ են կրոնադավանական եւ լեզվական տարբերութուններ, ինչպէս նաեւ, կախված բնակութեան աշխարհագրութունից՝ խիստ տարբեր աշխարհաքաղաքական կողմնորոշումներ: Սա երբեմն հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ Հայութունը, ըստ Հանթինգտոնի եզրաբանութեան, «բզկտված քաղաքակրթութուն է» եւ ենթակա է կազմալուծման:

Սակայն պետք է հաշվի առնել, որ Եվրոպական հանրութեան տարբեր հատվածները չունեն քաղաքակրթական ընդհանրութուն, ինչը պարունակում է ոչ միայն կրոնական, այլեւ՝ ընդհանրական հայրենիքի, պատմութեան, մշակութի ու մի շարք այլ հատկանիշներ: Եվ այդ առումով, մեր հանրութունը, չնայած առկա բաժանումներին, ուրույն՝ հայկական քաղաքակրթութեան կրողն է: Միեւնույն ժամանակ, բացառապէս ապավինել պատմական-քաղաքակրթական ռեսուրսին՝ այսօր բավարար չէ:

Մասնավորապէս, հայտնի է, որ հոգեւոր գործոնը նաեւ արտաքին

քաղաքական ազդեցության լծակ է, եւ անգամ ընդհանուր քրիստոնեական դավանանքի համատեքստում առկա են մարտահրավերներ, որոնք պետք է հաշվի առնվեն: Այս առումով, թերեւս հրատապ է հայկական քաղաքակրթական ընդհանրության գաղափարը հայ հանրության գիտակցության մաս դարձնող մեխանիզմների մշակումը:

Միեւնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ մեր դավանական-կրոնական առկա տարբերությունները ոչ միայն խնդիր են, այլ նաեւ լայն հնարավորություն: Հայ կաթոլիկներն առնչվում են Վատիկանի հետ, որը ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ հզոր աշխարհաքաղաքական կենտրոն է: Արեւմտյան աշխարհում եւ հատկապէս ԱՄՆ-ում խիստ ազդեցիկ քաղաքական գործոն են ավետարանականները: Նշված հանգամանքները, համապատասխան ռազմավարության պարագայում, կարող են օգտագործվել մեր ազգային շահերի համատեքստում: Ամենեւին չի կարելի բացառել, որ իսլամացված հայերի գործոնը նույնպէս կարող է գտնել իր քաղաքական կիրառությունը:

Որոշ հետեւություններ

Վերը ներկայացված նկատառումները վկայում են առնվազն այն բանի մասին, որ արդի կրոնադավանական խնդիրներն արժանի են լուրջ քաղաքական եւ վերլուծաբանական ուշադրության: Այս ոլորտում ամենից անարդյունավետ մոտեցումն առկա հարցերի շուրջ լռության կամ ծայրահեղ անհանդուրժողականության մթնոլորտի ձեւավորումն է: Անշուշտ, կան խնդիրներ, որոնց վերաբերյալ իրենց խոսքը պետք է ասեն ոչ միայն փորձագետները, այլեւ պետական կառույցները:

Միեւնույն ժամանակ, պետք է ընդունել, որ մեզանում այսօր առկա է թե՛ հետազոտողների, թե՛ փորձագիտական հրապարակումների, թե՛ առավել եւս գործնական քայլերի (առաջին հերթին՝ տեղեկատվական դաշտում) որոշակի պակաս: Վերջիններիս միջոցով պետք է ձգտել Հայության տարադավան-տարակրոն հատվածների գիտակցությունում ամրապնդել հայկական քաղաքակրթական ընդհանրության գաղափարը: Նկատենք, որ տեղեկատվական գործողությունները բնավ չեն ենթադրում պարզունակ քարոզչություն, այլ պահանջում են առաջին հերթին համապատասխան ծրագրերի, մարտավարության եւ ռազմավարության մշակում: Այդ խնդիրների լուծումը ենթադրում է ազգային մտավոր եւ քաղաքական ռեսուրսների համախմբում, ինչն անհնարին է պատկերացնել առանց մեր տարադավան եւ տարակրոն ազգակիցների ակտիվ մասնակցության:

ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ «ԴԵՐՍԻՄԻ ԴԵՊՔԵՐԻ» ՇՈՒՐՋ **Ռուբեն Մելքոնյան**

Թուրքիայի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ պատմության հետ առերեսվելու խնդիրը շարունակում է մնալ օրակարգային: Որքան էլ թուրքական իշխանությունները հայտարարեն իրենց «անբիժ» անցյալի մասին, միեւնույն է, հենց իրենք չեն կարողանում խուսափել պատմության տարբեր դրվագներից անդրադառնալուց: Այդպիսի վերջին օրինակն է այն, որ Թուրքիայի վարչապետ Էրդողանը, անդրադառնալով 1937-38թթ. Դերսիմ նահանգում թուրքական իշխանությունների իրականացրած կոտորածներին, ներողություն խնդրեց դրանց համար: Այս աննախադեպ իրադարձությունը դարձավ եւ այսօր էլ շարունակում է մնալ թուրքական հասարակական-քաղաքական օրակարգը ձեւավորող կարեւորագույն գործոն:

Աշխարհագրորեն Դերսիմը համապատասխանում է պատմական հայկական Ծոփք նահանգին եւ միշտ էլ հայտնի է եղել իր կիսանկախ կարգավիճակով: Դերսիմում, ուր տարածված է ալեւիականությունը, օսմանյան շրջանում եւս պետական իշխանությունը լիակատար չի գործել՝ բախվելով ցեղապետական (աշիրեթային) համակարգին: Պատահական չէ, որ 1890-ական թվականներից օսմանյան բարձրագույն իշխանությունները սկսել են մանրամասն ուսումնասիրել Դերսիմի խնդիրը եւ լուծումներ որոնել: Պետական եւ զինվորական բարձրաստիճան գործիչները սուլթանին են ներկայացրել բազմաթիվ զեկույցներ, որտեղ նշվել է, որ «դերսիմյան չարիքը» հարկ է լուծել ռազմական ճանապարհով: Այս խնդիրը ժառանգեց նաեւ Թուրքիայի Հանրապետությունը, եւ այն դարձավ արդեն քեմալական վերնախավի մտահոգության առաջնային թեմաներից մեկը: «Դերսիմյան զեկույցներ» պատրաստելու ավանդույթը շարունակվեց նաեւ հանրապետական Թուրքիայում: Սկսած 1920-ականների սկզբից՝ գրեթե ամեն տարի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների հանձնարարվել է ներկայացնել իրավիճակային զեկույց եւ առաջարկներ խնդրի վերաբերյալ: Այսօր այդ զեկույցների մեծ մասը գաղտնագերծված է, եւ դրանցից պարզ է դառնում, որ Դերսիմի խնդրի լուծման համար հիմնական առաջարկը եղել է՝ ռազմական միջամտություն, ժողովրդի բռնի տեղահանում եւ կոտորած: Ի վերջո, 1937թ. թուրքական իշխանությունները ձեռնարկում են Դերսիմի հարցի լուծման աշխատանքները եւ

գտնելով հարմար պատրվակ՝ սկսում են ռազմական լայնամասշտաբ գործողություն անբողջ նահանգում:

Այսօր հրապարակված փաստերը եւ ականատես-վերապրողների վկայություններն ապացուցում են, որ 1937-38թթ. Դերսիմում տեղի են ունեցել հստակ ցեղասպանական գործողություններ, որոնց զոհ է զնացել 70-100 հազար մարդ: Դրանց հաջորդել են դերսիմցիների բռնի տեղահանումը եւ վերաբնակեցումը երկրի առավել թուրքաբնակ շրջաններում: Սրա հիմնական նպատակն է եղել թուրքական միջավայրում դերսիմցիների լիակատար ձուլումը:

Չայերիս համար Դերսիմի խնդիրն ունի մեկ այլ կարեւորություն եւս. այս նահանգում, ըստ որոշ տվյալների, տարբեր տարիներին ապաստանել են կրոնական եւ դավանանքային պայքարում գտնվող հայեր: Բացի այդ, 1894-96թթ. համիդյան ջարդերի ժամանակ հազարավոր հայեր Դերսիմում եւ հարակից նահանգներում ստիպված ընդունել են իսլամ, սակայն գտնվելով ալեւիական միջավայրում՝ նախընտրել են հենց ալեւիական ուղղությունը, որը նրանց հայկական ինքնությունը պահպանելու համեմատաբար ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծել: Եվ վերջապես, մի շարք աղբյուրներում վկայված է, որ 1915թ. Չայոց ցեղասպանության ժամանակ Դերսիմում են ապաստանել շուրջ 30 հազար հայեր, որոնց մի մասը հետագայում տեղափոխվել է Արեւելյան Չայաստան, իսկ մի մասը՝ ընդունել ալեւիականություն եւ մնացել այնտեղ:

Դերսիմում հայկական ներկայությունը լրջորեն մտահոգել է նաեւ քեմալական իշխանություններին, եւ այսօր ի հայտ եկող փաստերն ապացուցում են, որ 1937-38թթ. դեպքերի ժամանակ ալեւիացած հայերը դիտվել են իբրեւ թիրախ: Մասնավորապես՝ Դերսիմի կոտորածը ղեկավարած թուրքական բանակի գեներալ Աբդուլա Ալփոդղանը 1938թ. հայտարարել է. *«Դերսիմում կան ծպտյալ քրիստոնյա հայեր, որոնք փոխել են իրենց անունները եւ ներկայանում են որպես մուսուլման: Դերսիմի խռովության մեջ սրանց մատը խառն է»*: Ջազա հեղինակների մոտ հանդիպում ենք տվյալների, որ թուրքական իշխանությունները եւ բանակը մինչեւ կոտորածն սկսելը ցեղապետերից պահանջել են իրենց մոտ շուրջ 20 տարի առաջ ապաստանած եւ արդեն ալեւիացած հայերին: Ժամանակի թուրքական մամուլը եւս լծված է եղել Դերսիմում հայկական հետք փնտրելու եւ դրանով իրենց հասարակությանն էլ ավելի լարելու գործին: Մասնավորապես՝ «Ուլուս» թերթը 1937թ. տպագրում է մի հոդված, որտեղ նշվում է, թե զազա ցեղապետ Սեյիդ Ռըզայի վրանից հայտնաբերվել են խաչեր եւ հայերեն գրքեր: Դերսիմում հայերի նկատմամբ ընդգծված հալածանքները կարող են նաեւ կապված լինել այն հանգամանքի հետ, որ

այդ կոտորածները ղեկավարում էին երիտթուրքական կուսակցության նախկին գործիչներ, որոնք բարձր պաշտոններ էին ստացել արդեն հանրապետական թուրքիայում: Ինչպես փոխանցել են մեր անձնական զրույցների ժամանակ դերսիմցի ականատես-վերապրողները. *«Թուրքերը 1915-ին կիսատ թողած գործը փորձում էին շարունակել 1937-ին»:*

Էրդողանի հայտարարությունից հետո բավական հետաքրքիր փաստեր են ի հայտ գալիս, որոնք նաև ապացուցում են թուրքական քաղաքական մեքենայի նորոյա կեղծիքները: Մասնավորապես՝ այսօր թուրքական քաղաքական օրակարգում ծառայել է նաև արխիվների եւ դրանց բացման հարցը: Հայտնի է, որ թուրք ամենատարբեր բարձրաստիճան ղեկավարներ եւ հատկապես Էրդողանը բազմիցս հայտարարել են, թե թուրքիայի արխիվները բաց են: Սակայն Դերսիմի իրադարձությունների շուրջ քննարկումներն ի հայտ բերեցին, որ այդ արխիվներից առնվազն երկուսը՝ արտաքին գործերի նախարարության եւ գլխավոր շտաբի արխիվները, փակ են: Արխիվների փակ լինելու հարցն առաջ քաշեցին տարբեր կողմնորոշման թուրք պատմաբաններ եւս. օրինակ, Թաներ Աքչանը ուշագրավ զուգահեռ անցկացրեց՝ ասելով, որ թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեթ Դավութօղլուն հանդես է գալիս որպես ժողովրդավարության ջատագով, սակայն փակ է պահում իր իսկ ղեկավարած գերատեսչության արխիվները: Իսկ թուրքիայի Ազգային ժողովի պատգամավոր, պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուն, քննադատելով իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությանը Դերսիմի դեպքերի վերաբերյալ կատարած հայտարարությունների համար, հետեւյալ հայտարարությունն արեց. *«Եթե իրոք ցանկանում եք ճշմարիտ արդյունքի հասնել եւ եթե այդքան համարձակ եք, ուրեմն բացեք այդ տարիների Ազգային ժողովի արձանագրությունները, բացեք գլխավոր շտաբի զինվորական արխիվները: Այդ ժամանակ Դերսիմի գործողությունների որոշումն ընդունվել է Ազգային ժողովում: Դեմոկրատական կուսակցությունից եւ ձեր կուսակցությունից էլ մարդիկ են եղել որոշումն ընդունողների թվում: Եթե այդքան համարձակ եք՝ եկեք բոլոր արխիվները բացեք»:*

Հետաքրքիր է նաև, որ արխիվների փակ լինելու խնդրի մասին հայտարարեցին ընդդիմադիր քաղաքական գործիչները եւ առաջին հերթին քեմալական ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուն: Փաստորեն, այս քննարկման ընթացքում հենց թուրք քաղաքական գործիչներն ու պատմաբանները հերքեցին թուրքիայի պաշտոնական հայտարարությունն առ այն, որ իրենց արխիվները բաց են: Ուշագրավ է նաև, որ ներթուրքական քննարկումների ժամանակ

կրկին ի հայտ եկավ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու հարցը. ընդդիմադիր քաղաքական ուժերն առաջարկեցին ստեղծել խորհրդարանական հանձնաժողով, որը պետք է քննարկի Դերսիմի հարցերը: Այսինքն՝ թուրքական քաղաքական մեքենան, ըստ էության, հայտնվում է իր իսկ լարած որոգայթների մեջ:

Ավելորդ չէ նկատել, որ թուրքական թե՛ հասարակական եւ թե՛ քաղաքական շրջանակներում շատերը քաջատեղյակ են Դերսիմուն կատարվածի եւ դրա ցեղասպանական բնույթի մասին: Դրա վկայությունները կարելի է հանդիպել տարբեր աղբյուրներում, սակայն հատկապես ուշագրավ են Թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելի խոսքերը՝ ասված հայտնի լրագրող Յասան Ջեմալին: Խոսելով 1980թ. ռազմական հեղաշրջումից առաջ ստեղծված վիճակի մասին՝ Դեմիրելն ասել է. *«Ձիմվորականները 1980-ից առաջ ինձանից պահանջեցին «Դերսիմի օրենքը», սակայն ես չտվեցի: Դերսիմուն սարսափելի իրադարձություններ էին տեղի ունեցել»*: 1986թ. Դերսիմի վերաբերյալ խոստովանական հայտարարություն է անում տարբեր տարիներին Թուրքիայի արտաքին գործերի նախարարի, անվտանգության պետի պաշտոնները զբաղեցրած Իհսան Սաբրի Չաղլայանգիլը: Ժողովրդա-հանրապետական կուսակցության ներկայիս նախագահ Քեմալ Քըլըչդարողլուին 1986թ. Չաղլայանգիլն ասել է. *«Մարդիկ թաքնվել էին քարանձավներում: Բանակը կիրառեց թունավոր գազ եւ սրանց մկների նման թունավորեց: Յոթից մինչեւ յոթանասուն տարեկան բոլոր դերսիմցիներին կոտորեցին»*:

Դերսիմի դեպքերի համար էրզողանի ներողությունն ուղղակիորեն տեղավորվում է Թուրքիայում գաղափարախոսական պայքարի համատեքստում, որտեղ իրար դեմ են դուրս եկել «չափավոր» կոչված իսլամիստները եւ քեմալականները: Արդեն մի քանի տարի իշխանությունների լուռ համաձայնությամբ ընթանում էր Դերսիմի հարցի խմորում, տեղի էին ունենում քննարկումներ, տպագրվում գրքեր, հոդվածներ: Թուրքիայի վարչապետի հայտարարությունից անմիջապես հետո բարձրացավ այն հարցը, թե ովքեր են այդ դեպքերի պատասխանատուները: Առաջ քաշվեց նաեւ հարց, թե արդյոք Աթաթուրքը տեղյակ է եղել կոտորածների մասին: Նշենք, որ այդ հարցն ունի հստակ պատասխան, քանի որ բազմաթիվ են փաստերը, որոնք ապացուցում են, որ Աթաթուրքն անձամբ է ղեկավարել գործողությունները: 1936թ. Թուրքիայի Ազգային ժողովում Աթաթուրքը հայտարարել է. *«Մեր ամենալուրջ խնդիրը Դերսիմն է, որն անհրաժեշտ է արմատախիլ անել ինչ գնով էլ որ լինի»*: Այս օրերին բավական սկանդալային հայտարարություն արեց հենց քեմալական ժողովրդա-հանրապետական կուսակցության Թունջելիի (Դերսիմ) պատգամավոր Յուսեյին

Այգյունը՝ ասելով. «Դերսիմի կոտորածի պատասխանատուն ժՅԿ-ն է, իսկ Աթաթուրքը տեղակ է եղել դեպքերին»: Կարող ենք եզրակացնել, որ վերջին տարիներին Թուրքիայում քեմալիզմի դեմ հարձակումների օղակը սեղմվում է ընդհուպ մինչեւ Աթաթուրք:

Էրդողանի հայտարարությունը մեկ այլ հակասություն եւս առաջ բերեց. գաղտնիք չէ, որ թուրք շատ պաշտոնյաներ բազմիցս հայտարարել են, թե Չայոց ցեղասպանության հարցը պետք է թողնել պատմաբաններին եւ դա քաղաքական գործիչների խնդիրը չէ, սակայն հենց ինքը՝ Էրդողանը, ներողություն խնդրեց Դերսիմի կոտորածների համար՝ հակասելով ինքն իրեն: Շատերը կարծում էին, որ Դերսիմից հետո Թուրքիայում քննարկումները կընթանան Չայոց ցեղասպանության խնդրի ուղղությամբ, սակայն դա տեղի չունեցավ: Ծավալվող քննարկումների սլաքներն ուղղվեցին քեմալականների տարբեր ժամանակներում գործած այլ հանցանքների, օրինակ՝ 1980թ. հեղաշրջումից հետո արձանագրված բռնարարքներին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Էրդողանի ներողությունը Դերսիմի կոտորածների համար ոչ թե փորձ էր իր անոթալի անցյալի հետ առերեսվելու ուղղությամբ, այլ գործիք ներքաղաքական եւ ավելի կոնկրետ՝ գաղափարախոսական պայքարում:

ՍԻՐԻԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԸ՝ ՆՈՐ ՄԱՐՏԱԶՐՈՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ *Արաքս Փաշայան*

2011թ. մարտից Սիրիայում սկսված հակաիշխանական շարժումները, ստանալով արտաքին աշխարհի քարոզչական, ռազմական եւ ֆինանսական աջակցությունը, երկիրը ներկա փուլում կանգնեցրել են սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ճգնաժամի առաջ: Դամասկոսը հայտնվել է միջազգային ճնշումների ներքո, իսկ Սիրիայի ներքաղաքական գործընթացներին ակտիվորեն շարունակում են միջամտել հատկապես ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Թուրքիան, Սաուդյան Արաբիան եւ Կատարը: Սիրիայում եւ նրա շուրջ ծավալվող իրադարձությունները Հայաստանի համար մտահոգիչ են ոչ միայն այն պատճառով, որ Սիրիան Հայաստանի բարեկամ երկիրն է: Խնդիրն այն է, որ Սիրիայում ապրում է 60-80 հազարանոց հայ համայնք:

Սիրիահայ համայնքը, մնացած համայնքների նման, վերապրել է Սիրիայի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կյանքի դժվարությունները, մասնակից դարձել թե՛ ազգային-ազատագրական շարժումներին, թե՛ արաբ-իսրայելական պատերազմներին: 1940-ականների վերջին եւ 1950-ականներին Սիրիայում տեղի ունեցած բազմաթիվ հեղաշրջումները, այնուհետեւ 1958-1961 թվականներին Սիրիայի եւ Եգիպտոսի միավորումը, բացասական ազդեցություն են ունեցել ողջ երկրի, այդ թվում՝ հայերի համար:

Սակայն արդեն 1967թ. հայ համայնքը պատմական ձեռքբերում ունեցավ: Նրան հաջողվեց սիրիական պետության կողմից ստանալ կարելուորագույն մի զիջում: Միայն հայերին Սիրիայում թույլատրվեց հայկական (սակայն պետական համարվող) դպրոցներում չորս ժամ ազգային լեզուն՝ հայերեն դասավանդել եւ երկու ժամ հայերենով անցկացնել կրոնի դասերը: Եվ չնայած հայ ժողովրդի պատմությունն առարկայի արգելքին, պետության հետ ներքին պայմանավորվածության արդյունքում, իրականում շաբաթը վեց ժամ հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն եւ քրիստոնեական կրոն է դասավանդվում հայկական դպրոցներում:

Հայ համայնքի համար ազգային գործունեություն ծավալելու առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, երբ իշխանության եկավ Հաֆեզ

ալ-Ասադը (1971-2000): Թե՛ վերջինիս եւ թե՛ Բաշար ալ-Ասադի օրոք հանդուրժողական քաղաքականություն տարվեց փոքրամասնությունների նկատմամբ: Չափեզ ալ-Ասադի օրոք պետության հետ հայերի ձեռք բերած պայմանավորվածությունները վերջնականորեն ամրագրվեցին: Էլ ավելի նպաստավոր պայմաններում շարունակեցին գործել հայկական տասնյակ մարզական եւ մշակութային միությունները, բարեգործական հաստատությունները եւ վերջապես՝ վարժարանները: Ավելի սերտացան կապերը Հայաստանի հետ: Այս ամենին զուգահեռ, հայերը կարողացան ակտիվ դերակատարություն ստանձնել Սիրիայի սոցիալ-տնտեսական կյանքում:

Չնայած անկախ Սիրիայի պատմության ընթացքում հայերը երկրի հասարակական-քաղաքական գործընթացներին գրեթե չեն մասնակցել՝ կենտրոնանալով հայապահպանության խնդիրների վրա, սակայն այդ հանգամանքը չի խանգարել, որպեզի նրանք գիտակցվեն որպես Սիրիայի լիիրավ ու արժանավոր քաղաքացիներ՝ վաստակելով թե՛ սիրիական կառավարության եւ թե՛ հասարակության համակրանքը:

Հարկ է նշել, սակայն, որ վերջին շրջանում հայ համայնքին ուղղված մարտահրավերներ են ձեւավորվել, ինչը, թերեւս, օրինաչափ է թվում գլոբալացման ներկա պայմաններում: Մեծացել են արտագաղթի տեմպերը, արաբերենը նախկինի համեմատ ավելի շատ է սկսել օգտագործվել, խառնամուսուկությունների քանակը նույնպես որոշ չափով մեծացել է: Բացի այդ, հայերի շրջանում մտահոգություն կա տարածաշրջանում տիրող լարված ու անկայուն մթնոլորտի, կրոնականացվածության մակարդակի աճի եւ վերջապես՝ վատթարացող սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ կապված:

Ահա այսպիսի վիճակում էր հայ համայնքը, երբ Սիրիան ներքաշվեց հակաիշխանական շարժումների մեջ: Սիրիական հասարակության, այդ թվում՝ հայերի համար նման զարգացումներն ինչ-որ իմաստով անսպասելի էին: Ապաքաղաքականացված լինելով հանդերձ՝ հայերը որոշեցին իրենց աջակցությունը հայտնել իշխող վարչակարգին՝ նրա մեջ տեսնելով իրենց ազգային գոյության եւ անվտանգության երաշխիքները: Սիրիայի շատ ու շատ քաղաքացիների նման հայերը համոզված էին, որ նախագահի հեռացումը երկիրը կարող է կանգնեցնել տեւական անկայունության առաջ՝ խարխլելով էթնիկ եւ դավանական հանդուրժողականության կայուն մթնոլորտը:

Արդյո՞ք հայերը կարող էին չեզոքություն պահպանել՝ սպասելով դեպքերի հետագա ծավալմանը, դժվար է ասել: Ի վերջո, իշխող վարչակարգին աջակցելը նույնպես քաղաքացիական դիրքորոշում է,

ինչն, ըստ էության, ի ցույց է դնում հարգանքը սիրիական պետականության նկատմամբ:

Սակայն աստիճանաբար, իրավիճակի վատթարացմանը զուգահեռ, Սիրիայում հայերի հեռանկարի շուրջ քննարկումներում տեղ գտան նաև հոռետեսական տրամադրություններ՝ նկատի ունենալով այն թեզը, թե Մերձավոր Արևելքում ցանկացած անկայունության ժամանակ թիրախ են դառնում հենց փոքրամասնությունները: Նշենք, որ Եգիպտոսի 1952թ. հեղափոխությունից, 1975-1989թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմից, նաև՝ 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունից հետո հայերի մի զգալի մասը լքեց Մերձավոր Արևելքը եւ արտագաղթեց Արևմուտք: Եթե 1970-ականներին «Մեծ Մերձավոր Արևելքում» (ներառյալ՝ Թուրքիայում եւ Իրանում) ապրում էր մոտ մեկ միլիոն հայ, ապա այժմ՝ մոտ 300 000: Եգիպտոսի երբեմնի ծաղկուն հայ համայնքն այսօր վերացման շեմին է, այստեղ ընդամենը մի քանի հազար հայ է մնացել: Նույնը վերաբերում է Իրաքի, Հորդանանի կամ Պաղեստինի հայ համայնքներին: Էականորեն տուժել է նաև Լիբանանի հայությունը:

Վերադառնալով սիրիական զարգացումներին՝ նշենք, որ հնարավոր իշխանափոխության դեպքում ընդհանուր առմամբ փոքրամասնությունների վերաբերյալ մտահոգությունն ամենեւին պատահական չէ եւ կապված է ցույցերի սկզբնական շրջանում ծայրահեղական շրջանակների կողմից հնչեցված «Ալավիներին՝ գերեզման, քրիստոնյաներին՝ Լիբանան» կարգախոսի հետ: Խնդիրն այն է, որ ներկայիս ընդդիմադիր շարժումները որոշակի կապ ունեն նաև Սիրիայի բնակչության մոտ 12 տոկոսը կազմող, սակայն իշխանության լծակները տասնյակ տարիներ իրենց ձեռքը պահող ալավիական վերնախավի նկատմամբ երկրի հիմնական՝ սուննի բնակչության դժգոհության հետ:

Ինչ վերաբերում է քրիստոնյաներին, պետք է նշել, որ թե՛ Իրաքի եւ թե՛ «արաբական գարնան» իրադարձություններն ավելի խոցելի են դարձրել նրանց դիրքերը Մերձավոր Արևելքում: Ասվածի ապացույցն է նաև վերջին շրջանում Եգիպտոսում ղպտիների նկատմամբ իրականացված բռնությունները: Օրեր առաջ Անգլիկան եկեղեցու առաջնորդ, Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռոուեն Ուիլյամսը, Ելույթ ունենալով քրիտանական խորհրդարանի Լորդերի պալատում, նշեց, որ տարածաշրջանում քրիստոնյաների դիրքերն ավելի խոցելի են, քան երբեւէ վերջին հարյուրամյակի ընթացքում:

Սակայն Սիրիայի պարագայում կրոնական ծայրահեղականությունն այնքան էլ լայն տարածում չունի: Սիրիական ընդդիմությունը կազմված է

հիմնականում երկու հատվածից՝ լիբերալ եւ կրոնաքաղաքական, որոնցից ոչ մեկը Սիրիայում հակաքրիստոնեական կոչերով հանդես չի եկել: Այս տեսանկյունից հետաքրքրական է Սիրիայի ընդդիմադիր «Ազգային խորհրդի» ժամանակավոր նախագահ Բուրհան Ղալյունի հարցազրույցը «The Wall Street Journal»-ին, որում նա, ի պատասխան Սիրիայի դավանական փոքրամասնություններին առնչվող հարցին, նշել է, թե Սիրիայի բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ, եւ կրոնական գործոնով պայմանավորված որեւէ խտրականություն մեծամասնության եւ փոքրամասնության միջեւ չի կարող: Վերջիններս պետք է դիտարկվեն ոչ թե որպես փոքրամասնություններ, այլ պարզապես՝ քաղաքացիներ: Նման դիտարկումն, իհարկե, լավատեսություն է ներշնչում, սակայն որեւէ մեկը չի կարող ասել, թե Բաշար ալ-Ասադի հնարավոր հեռացումից հետո երկրում ինչ իրավիճակ կարող է ստեղծվել:

Հատկանշական է, որ Սիրիայի հայ համայնքի հեռանկարին առնչվող հարցերն այսօր քննարկվում են թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում: Կարծիքներն, իհարկե, շատ դեպքերում հակոտնյա են: Առանձին տեսակետի համաձայն՝ Բաշար ալ-Ասադի հնարավոր իշխանափոխությունը մեծագույն վնաս կհասցնի հայերին՝ կասկածի տակ դնելով Սիրիայում նրանց հետագա ազգային գոյությունը, խնդիրներ ստեղծելով նույնիսկ ֆիզիկական անվտանգության ոլորտում: Ըստ մեկ այլ տեսակետի՝ Սիրիայում ներկայումս պայքար է ծավալվում հանուն ժողովրդավարության: Հետեւաբար, չի բացառվում, որ ապագա բարեփոխված Սիրիայում հայերը, երկրի մյուս քաղաքացիների նման, օգտվեն ժողովրդավարական ազատություններից, ինչպես, օրինակ, Լիբանանում: Այդ դեպքում սիրիահայ համայնքն էլ հնարավորություն կունենա դառնալ երկրի հասարակական-քաղաքական կյանքի լիարժեք մասնակիցը:

Այս տեսանկյունից հետաքրքրական է սփյուռքահայ հրապարակախոս Յ.Քալսահակյանի տեսակետը, որ հրատարկել է «Ազատ հայ» կայքէջում. *«Ապագայ դրութիւնը, իմ անձնական կարծիքով, վատ չի կրնար ըլլալ հայերուն համար: Նախ պետք է ըսել, որ հայերը այնքան աննշան փոքրամասնութիւն են 23 միլիոն հասնող բնակչութեան մը համար, որ իրենց դէմ կանխամտածուած հաւաքական վնաս կարելի չէ ակնկալել: Անոնք տակաւին կը վայելեն ճարտար քաղաքացիի համբաւ, բայց անշուշտ բարոյական առումով արժէզրկուած պիտի ըլլան, եթէ չկարենան, թէկուզ ուշացած, համասուրիական ժողովրդավարական տեսլականին հետ առնչուիլ: Կը խորհիմ, թէ սուրիահայութեան մեծ մասը*

պիտի շարունակե ապրիլ իր կեանքը սովորականին նման, քանի որ ապագայ Սուրիան պերճանքը պիտի չունենայ անցեալի սխալները կրկնելու, իսկ երկրի տնտեսական յառաջդիմութիւնը եւ զարգացումը կարելոր բնագաւառներ են, ուր հայերու ներդրումը արժէք կրնայ ներկայացնել»:

Եզրակացություններ

❖ Հայերը Սիրիայի մնացած քաղաքացիների նման մտահոգված են երկրում իրավիճակի վատթարացմամբ: Անկայունությունը, տնտեսական ծանր իրավիճակը, գործազրկությունը, բարոյահոգեբանական մթնոլորտի աղճատումը, բնականաբար, բացասաբար են անդրադառնում սիրիական հասարակության, այդ թվում՝ հայերի վրա: Այս իրավիճակը ոչ դրականորեն է ազդում հայկական կրթական, մշակութային եւ մարզական հաստատությունների գործունեության վրա, որոնք հիմնականում գոյատևում են հայերի նվիրատվությունների հաշվին: Սակայն համայնքի կյանքը շարունակվում է նախկին հունով, եւ նրա ապահովությունն էականորոն վտանգված չէ: Երկրի մյուս քաղաքացիների նման՝ հայերը ստիպված են դիմակայել ներկա փուլի դժվարություններին:

❖ Սիրիայում իշխանություն – ընդդիմություն առճակատման համատեքստում, խոսելով հայերի դիրքորոշման մասին, պետք է նկատի ունենալ, որ վերջիններս վարչակարգին աջակցելուց բացի այլ դիրքորոշում չէին կարող որդեգրել, եթե հաշվի առնենք նաեւ, որ ընդդիմադիրներին աջակցում է Թուրքիան: Այդ երկիրը խորապես շահագրգռված է ոչ միայն Սիրիայում հայերի դիրքերի թուլացմամբ, այլև գործում է Հայոց ցեղասպանության հարցի միջազգային ճանաչման դեմ, որը Սփյուռքի կարեւորագույն օրակարգերից է:

❖ Հնարավոր իշխանափոխության դեպքում հազիվ թե կանխամտածված որեւէ դավադրություն հայերի նկատմամբ տեղի ունենա, քանի որ ներքին հակասությունների շղթայում նրանք ամենեւին ներգրավված չեն եւ մինչ օրս վայելել են հասարակության գրեթե բոլոր շերտերի համակրանքը: Հիմնական լարվածությունը, ըստ ամենայնի, կարող է ծավալվել սուենիների եւ ալավիների միջեւ:

❖ Սիրիայում հայ համայնքի հեռանկարը քննարկելիս պետք է հաշվի առնել նաեւ սիրիական հասարակության առանձնահատկությունները, նկատի ունենալ, որ սիրիացիները շահեկանորեն առանձնանում են արաբական մյուս հասարակություններից: Ավանդականորեն սիրիացի-

ները հայերի նկատմամբ դրական վերաբերմունք ունեն: Նույն իսլամադավան սիրիացիներն էին, որ հարյուր տարի առաջ ապաստան տվեցին նրանց եւ հենց վերջիններիս հետ հայերը հետագայում համագործակցության եւ հարաբերվելու մեծ փորձառություն ձեռք բերեցին:

❖ Սիրիայի հայ համայնքում տնտեսական գործոնով պայմանավորված արտագաղթը նոր երեւոյթ չէ, այն ակտիվացել է վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Հազիվ թե գտնվի մի ընտանիք, որի անդամներից որեւէ մեկն արտերկրում չլինի: Այնպես որ՝ համայնքում նկատվող արտագաղթի դրսեւորումները ճիշտ չի լինի միանշանակ դիտարկել որպես առկա ճգնաժամի հետեւանք:

❖ Սիրիահայ համայնքի համար մտահոգիչ կարող է լինել երկրում քառասային իրավիճակի ստեղծումը, ինչպես նաեւ Թուրքիայի կողմից Սիրիա հնարավոր ներխուժումը եւ բուժֆերային գոտու ստեղծումը, որի մասին ժամանակ առ ժամանակ խոսվում է: Խնդիրն այն է, որ նման զարգացումների հետեւանքով սույն գոտու մեջ կարող են հայտնվել հայերով բնակեցված շրջաններ (Քեսապ, Հալեպ եւ այլն): Սակայն զարգացումների նման սցենարն այնքան էլ իրատեսական չի թվում:

ԹՈՒՐՔ -ՍԻՐԻԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայկ Գաբրիելյան

Վերջին շրջանում թուրք-սիրիական հարաբերությունները բավական հագեցած էին այնպիսի իրադարձություններով, որոնք հանգեցրին երկու երկրների միջև լարվածության մեծացմանը: Այդ մասին են վկայում փոխադարձ քննադատություններն ու մեղադրանքները, ինչպես նաև՝ երկուստեք պատժամիջոցների սահմանումը:

Նոյեմբերի 2-ին Սիրիայի փոխարտգործնախարար Ֆայսալ Միգդադը հայտարարեց, որ Թուրքիան, ինչպես նաև Լիբանանը, Սաուդյան Արաբիան ու Հորդանանը ոչ պաշտոնապես ֆինանսավորում են «ահաբեկչությունը»՝ դրա տակ նկատի ունենալով հակակառավարական ելույթների մասնակիցներին: Դրանից 10 օր անց՝ նոյեմբերի 12-ին, Սիրիայում հարձակման ենթարկվեցին (քարկոծվեցին) Դամասկոսում գտնվող Թուրքիայի դեսպանատունը եւ Հալեպում ու Լաթաքիայում գտնվող Թուրքիայի հյուպատոսարանները: Հալեպում ու Լաթաքիայում այրեցին նաև Թուրքիայի դրոշը: Հարկ է նշել, որ դա վերջին 60 տարիների համար աննախադեպ իրադարձություն էր Սիրիայում (1951 թվականի նոյեմբերի 18-ին Հալեպում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի դրոշների հետ մեկտեղ այրել էին նաև Թուրքիայի դրոշը):

Թուրքական կողմը բավական ցավազին ընդունեց Սիրիայում իր դիվանագիտական ներկայացուցչությունների վրա կատարված հարձակումն ու դրոշի այրումը: Արդեն հաջորդ օրն իսկ Թուրքիան բողոքի նոտա հղեց Սիրիային, իսկ նոյեմբերի 15-ին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլն անընդունելի որակեց Սիրիայում Թուրքիայի քաղաքացիների ու դիվանագետների վրա կատարված հարձակումը՝ ընդգծելով, որ եթե անհրաժեշտ միջոցառումներ չձեռնարկվեն ու այդօրինակ հարձակումները կրկնվեն, ապա թուրքական կողմի արձագանքն, անկասկածորեն, կլինի լրիվ այլ:

Նույն օրը Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիայի ողջ պատմության ընթացքում թուրքական դրոշի նկատմամբ ոտնձգություն գործածները ստացել են արժանի պատասխան, եւ որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը պետք է անհապաղ գտնի ու պատժի Թուրքիայի դրոշի վրա հարձակում իրականացնողներին: Արդյունքում՝ Ասադն իր համակիրներին կոչ արեց այլևս չայրել Թուրքիայի դրոշը:

Նոյեմբերի 16-ին Ռաբաթուն տեղի ունեցած Թուրք-արաբական ֆորումի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն Սիրիայի ղեկավարությանը կոչ արեց անմիջապես դադարեցնել սեփական ժողովրդի դեմ գործադրվող բռնությունները եւ իրականացնել ժողովրդավարական բարեփոխումներ՝ ընդգծելով, որ ոչ մի ղեկավարություն չի կարող հաղթել սեփական ժողովրդի դեմ պայքարում:

Ֆորումից հետո Դավութօղլուն լրագրողների հետ զրույցում կարելուրեց Սիրիայի հարցում Թուրքիայի ու Արաբական երկրների լիգայի (ԱԵԼ) գործողությունների զուգակցումը եւ Սիրիայի նկատմամբ Թուրքիայի ներկայիս քաղաքականությունը բաժանեց 4 փուլի. «1) Այս տարվա հունվարին Էրդողանն այցելեց Սիրիա եւ Ասադին առաջարկեց բարեփոխումներ անցկացնել: Դամասկոսը խոստացավ դա անել, սակայն գործնականում որեւէ քայլ չձեռնարկեց, 2) Ես այցելեցի Սիրիա եւ Ասադին զգուշացրի նրա վարած քաղաքականության հնարավոր բացասական հետեւանքների մասին՝ ինչպես Սիրիայի, այնպես էլ Թուրքիայի համար: Չնայած դրան, կառավարական զորքերը շարունակեցին իրենց պատժիչ գործողությունները քաղաքներում, 3) Դամասկոսն օպերացիա ձեռնարկեց Զանա քաղաքում: Օգոստոսին մեր հարաբերություններում նոր փուլ սկսվեց, որի իմաստն այսուհետ սիրիական ղեկավարության հետ որեւէ բանի շուրջ չխոսելն էր, 4) Պաշտոնական Անկարան կանոնավոր շփումներ հաստատեց սիրիական ընդդիմության հետ»:

Նոյեմբերի 17-ին Էրդողանը, Ստամբուլում ելույթ ունենալով Սեւծովյան էներգետիկ եւ տնտեսական ֆորումում, հայտարարեց, որ Սիրիայի հարցում չի տեսնում արելնտյան այն նույն խանդավառությունը, ինչ որ Լիբիայի պարագայում էր. «Պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկել Սիրիայում արյունահեղությունը դադարեցնելու ուղղությամբ: Սիրիայում տիրող իրավիճակը բացասաբար է անդրադառնում տարածաշրջանի կայունության վրա: Էներգակիրների տեսանկյունից Սիրիան հարուստ երկիր չէ, դրա համար էլ այն կարող է չգտնվել միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Սիրիան այդքան նավթ չունի, եւ նա չի կարող այնպիսի արձագանք առաջացնել, ինչպես որ Լիբիայի պարագայում է: Սակայն Սիրիայում զոհվում են մարդիկ, ինչպես որ Լիբիայում էր: Լիբիայի իրադարձություններին ուշադրություն դարձրած անձինք չեն կարող լռել սիրիական զարգացումների նկատմամբ: Եթե ոմանց համար կարելորդ նավթն է, ապա մեզ համար կարելորդ մարդիկ են: Մենք չենք ընկել նրանց հարստության հետեւից»:

Ի դեպ, բրիտանական The Economist թերթը գրեց, որ հարեւան երկրներին մարդու իրավունքների դասեր տվող Թուրքիան նախ պետք է

նայի իր ներսում տեղի ունեցող դեպքերին. «Ավելի քան 500 երեխաներ ահաբեկչական կազմակերպության անդամ հանդիսանալու մեղադրանքով հայտնվել են թուրքական բանտերում: Բացի այդ, թուրքական բանտերում դեռևս գտնվում են 76 լրագրողներ, որոնք նույնպես մեղադրվում են ահաբեկչության հետ կապեր ունենալու մեջ: Այդ ցուցանիշով Թուրքիան անգամ գերազանցում է Չինաստանին»:

Նոյեմբերի 21-ին Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալեմը Դամասկոսում հայտարարեց, որ Սիրիայում քաղաքացիական պատերազմի առաջացման վտանգի մասին ազդարարող ԱՄՆ պետքարտուղար Յիլարի Բլինքոն ու Ահմեթ Դավութօղլուն իրադարձությունների ընթացքն ուղղում են հենց այդ ուղղությամբ: Իսկ նոյեմբերի 27-ին Բաշար Ասադը, որն ավելի վաղ Թուրքիան որակել էր որպես ԱՄՆ խոսնակ, հայտարարեց, որ Թուրքիայում մի շարք ուժեր ցանկանում են վերակենդանացնել Օսմանյան կայսրությունը¹, սակայն, հասկանալով, որ դա անիրականանալի երազանք է, փորձում են կրոնական ուղղվածությամբ կուսակցությունների միջոցով իրենց ազդեցությունը տարածել արաբական աշխարհում:

Նոյեմբերի 21-ին Սիրիայում՝ Յոնս եւ Յամա քաղաքների միջև ընկած տարածքում, զինված հարձակման ենթարկվեց ուխտագնացությունից վերադարձող թուրքերի ավտոբուսը: Նույն օրը Սիրիայում լրտեսության մեղադրանքով ձերբակալվեց 7 թուրք ուխտավոր: Դրա հաջորդ օրն Էրդողանն արձագանքեց տեղի ունեցածին. «Սիրիան, անտեսելով միջազգային բոլոր պարտավորությունները, հարձակում է գործել մեր դիվանագիտական ներկայացուցչությունների վրա, իսկ այժմ էլ հարձակվում է անգեն ուխտավորների վրա: Ահա դա է ներկայիս Սիրիան: Բաշար Ասադն անցել է բոլոր ընկալելի սահմանները՝ հայտարարելով, թե պատրաստ է պատերազմել մինչև վերջ: Ես նրան հարցնում եմ՝ ո՞ւմ դեմ է նա ցանկանում պատերազմել, սեփական ժողովրդի՞: Եթե դա այդպես է, ապա ես ցանկանում եմ նրան հիշեցնել Յիտլերի, Մուսուլիմիի, Չաուշեսկուի ճակատագրերը²: Նրանք բոլորը պատերազմել են իրենց ժողովուրդների դեմ, եւ ո՞ւր են նրանք ներկայումս: Գուցե Ասադը տեղյակ չէ՞ դրանից, այդ դեպքում թող պատմություն ուսումնասիրի: Եթե Ասադը դասեր չի քաղել նրանց ճակատագրից, ապա գոնե թող նայի Մուամար Քադաֆիին, որը 32 օր առաջ նույն խոսքերն էր ասում, ինչ այժմ Ասադը»:

Նույն օրը Մեծ Բրիտանիայում գտնվող Աբդուլա Գյուլը բրիտանական Guardian թերթին տված հարցազրույցում հայտարարեց, որ արդեն 8 ամիս է, ինչ Սիրիայում շարունակվում են ժողովրդական

հուզումները, եւ որ Սիրիան հայտնվել է փակուղում. «Մենք ճիշտ չենք համարում արտաքին միջամտությունը: Այդ երկրին անհրաժեշտ են ժողովրդավարական բարեփոխումներ, որոնք պետք է իրականացնի ժողովուրդը: Ոչ ոք այդ երկրում չի ցանկանում քաղաքացիական պատերազմ: Մենք այլևս չենք վստահում Ասադին: Ինչ վերաբերում է նրան, թե Սիրիան կարող է աջակցել PKK-ին, ապա, հազիվ թե, Սիրիան նմանատիպ սխալ թույլ տա (Դավութօղլուն նույնպես գտնում է, որ Սիրիան չի համարձակվի աջակցել PKK-ին): Ամեն դեպքում մենք պատրաստ ենք սիրիական հարցում վատթարագույն սցենարին»:

Գյուլն անդրադարձել է նաեւ վերջին շրջանում փորձագետների կողմից հետզհետե հաճախակիացող կարծիքներին, թե Թուրքիան ձգտում է օսմանյան ժամանակների նման վերածվել Մերձավոր Արեւելքի կենտրոնի. «Մենք հպարտ ենք մեր պատմությամբ, սակայն միեւնույն ժամանակ մենք իրատես ենք: Մենք որեւէ քողարկված հայեցակարգ չունենք մեր տարածաշրջանի հանդեպ»:

Նոյեմբերի 29-ին Դավութօղլուն ներկայացրեց Սիրիայի նկատմամբ սահմանված թուրքական 9 կետանոց պատժամիջոցները, ինչը ողջունվեց ԱՄՆ-ի կողմից: Այդ պատժամիջոցների սահմանումը նշանակում է, որ Թուրքիան վաղաժամ է համարում սիրիական խնդրի լուծման ուժային տարբերակը եւ հնարավոր է համարում այլ միջոցներով դրա լուծումը: Այդ պատժամիջոցներն են. 1) Կասեցնել բարձր մակարդակով Սիրիայի հետ ռազմավարական համագործակցության մեխանիզմի համատեղ գործունեությունը: Դրա աշխատանքը վերականգնվելու է այդ երկրում իշխանափոխությունից հետո, երբ նոր իշխանությունը բարյացակամ կգտնվի իր ժողովրդի նկատմամբ: 2) Արգելել սեփական ժողովրդի դեմ բռնություն գործադրելու մեջ մեղադրվող մի շարք սիրիացի առաջնորդների մուտքը Թուրքիա, բռնագանձել նրանց ունեցվածքը: Համանման միջոցներ ձեռնարկել Ասադի ռեժիմին աջակցող սիրիացի ձեռնարկատերերի նկատմամբ: 3) Արգելք դնել Սիրիային ամեն տիպի սպառազինության ու զինամթերքի մատակարարումների վրա: 4) Միջազգային իրավական նորմերին համապատասխան՝ արգելք դնել երրորդ երկրների կողմից Թուրքիայի օդային տարածքով Սիրիային զենքի մատակարարան վրա: 5) Սառեցնել Սիրիայի Կենտրոնական բանկի հետ հարաբերությունները: 6) Սառեցնել Թուրքիայում սիրիական կառավարության ֆինանսական ակտիվները: 7) Կասեցնել Սիրիայի կառավարության հետ վարկային հարաբերությունները: 8) Դադարեցնել Սիրիայի Առևտրային բանկի հետ գործառնությունները՝ բացառությամբ ներկայումս տարվողների: 9) Սառեցնել վարկավորման համաձայնագիրը, որը

կնքվել է Սիրիայի ենթակառուցվածքների նախագծերի ֆինանսավորման նպատակով:

Դավաբոյուն ընդգծեց, որ Սիրիան անտեսել է բռնություններին վերջ դնելու եւ իր տարածք դիտորդներին ներս թողնելու վերաբերյալ Թուրքիայի եւ ԱԵԼ-ի համատեղ նախաձեռնությունը, ինչի համար էլ իրենց որեւէ այլ բան չէր մնում, քան նրա նկատմամբ պատժամիջոցներ սահմանելը. *«Այս բոլոր պատժամիջոցներն առաջին հերթին ուղղված են սիրիական ժողովրդի դեմ գործադրվող բռնությունների կանխմանը: Թուրքիան դեմ է ճգնաժամի կարգավորման համար Սիրիայում արտաքին ռազմական միջանտոնային: Չնայած դրան՝ Թուրքիան պատրաստ է Սիրիայի հետ ամեն տիպի սցենարի զարգացմանը: Եթե Սիրիայում տիրող իրավիճակը հանգեցնի նրան, որ այդ երկրում բռնկվի փախստականների նոր զանգվածային ալիք, ապա միջազգային հանրությունը կարող է դիտարկել տարածաշրջանում բուժերային գոտու ձեւավորման հարցը: Սեփական ժողովրդին կտտանքների ենթարկող ռեժիմը գոյատևելու շանսեր չունի»:*

Ի դեպ, դրանից առաջ նշվում էր, թե Թուրքիան կարող է կասեցնել Սիրիային էլեկտրաէներգիայի մատակարարումները եւ նվազեցնել մատակարարվող ջրի չափաբաժինը, սակայն թուրքական պատժամիջոցների սահմանման օրը Թուրքիայի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Թաներ Յըլդըզը հերքեց դա. *«Ի սկզբանե Թուրքիան էլեկտրաէներգիայի մատակարարումը դիտարկել է որպես մարդասիրական օգնություն: Սիրիայի հյուսիսին մատակարարվող այդ էլեկտրաէներգիան օգտագործում է Սիրիայի ժողովուրդը: Էլեկտրաէներգիան ու ջուրը կենսականորեն անհրաժեշտ են բնակչության համար, որը մեծապես կտուժի դրանց դադարեցումից: Դրա համար էլ դրանք չեն ընդգրկվել Սիրիայի նկատմամբ մեր պատժամիջոցների թվում»:*

Թուրքական պատժամիջոցների հաջորդ օրն իսկ Սիրիայի կառավարությունը կասեցրեց Թուրքիայի հետ ազատ առևտրի մասին պայմանագրի շրջանակներում տարվող աշխատանքները, իսկ դեկտեմբերի 3-ին ժամանակավորապես փակվեց Թուրքիայի հարավարեւելյան հատվածում ընկած Գազիանթեփ քաղաքում գտնվող Սիրիայի հյուպատոսությունը, որը բացվել էր 2005 թվականի ապրիլին: Այն վերջնականապես կփակվի դեկտեմբերի վերջին:

Նոյեմբերի վերջին եգիպտական «Ալ-Ռայ Ալ-Արաբիե» թերթը գրեց, որ Լիբիայի Ազգային անցումային խորհրդի ղեկավար Մուսթաֆա Աբդուլջելիլը 600 լիբիացի զինվոր է ուղարկել Սիրիա՝ ընդդիմությանն օգնելու համար. *«Նրանք Սիրիա են մտել Թուրքիայի տարածքով եւ մարտնչելու*

են սիրիացի ընդդիմադիրների կողմից, նաեւ ռազմական փորձ են ուսուցանելու նրանց»: Արդեն դեկտեմբերի 6-ին սիրիական SANA պետական գործակալությունը հայտնեց, որ մոտ 35 զինված գրոհայիններ փորձել են Թուրքիայից ներթափանցել Սիրիա: Սակայն սիրիացի սահմանապահները կրակ են բացել նրանց ուղղությամբ եւ վիրավորել նրանցից մի քանիսին, ինչից հետո գրոհայինները նահանջել են թուրքական տարածք: Դրանից հետո սիրիական տանկերը հայտնվեցին թուրքական սահմանին՝ հետ մղելու համար նմանատիպ հնարավոր նոր հարձակումները: Իսկ դեկտեմբերի 7-ին սիրիական նավատորմը կանխեց ծովային ճանապարհով Թուրքիայից Սիրիա ներթափանցելու լիբիացի զինյալների փորձը:

Պետք է նշել, որ սա առաջին դեպքը չէ, երբ գրոհայինների խմբերը Թուրքիայից փորձում են ներթափանցել Սիրիա: Հունիսի 12-ին SANA-ն հայտնել էր, որ Թուրքիայի սահմանի մոտ գտնվող Ջիսր Ալ-Շուղուրում ձերբակալվել են Թուրքիայից Սիրիա ներթափանցած գրոհայինների երկու խմբեր, որոնց մոտ հայտնաբերվել են թուրքական հեռախոսաքարտեր, կապի միջոցներ, զոււմար:

Դեկտեմբերի 8-ին Թուրքիայի առեւտրի եւ մաքսային ծառայության նախարար Հայաթի Յազըջընը հայտարարեց, որ իրենք վճռել են Սիրիայից ներկրվող բոլոր ապրանքների վրա սահմանել 30 տոկոսանոց հարկ: Դրա հաջորդ օրը Սիրիան միակողմանիորեն փակեց Նուսայբինի (Մարդինի նահանգ) ու Աքչաքալեի (Շամլըուրֆայի նահանգ) անցակետերը: Սիրիական կողմն իր այս քայլը պատճառաբանեց սահմանին շինարարական աշխատանքների ձեռնարկմամբ, սակայն շատերի կարծիքով՝ դա արվել է քաղաքական մոտիվներով, ինչն առավել իրատեսական է հնչում: Ի պատասխան՝ Թուրքիայի տրանսպորտի, ծովագնացության ու կապի նախարար Բինալի Յըլդըրընը հայտարարեց, որ գործը չի հասնի թուրք-սիրիական հարաբերությունների խզմանը, եւ որ Թուրքիան Սիրիայի տարածքը շրջանցելու խնդիրներ չունի. ծովային ճանապարհից բացի, առկա է նաեւ Իրաք-Հորդանան ցամաքային երթուղին, ինչի համար Թուրքիան մտադիր է ավելացնել իրաքյան սահմանին իր անցակետերի քանակը:

Այսպիսով, թուրքական կողմը ձգտում է իշխանափոխություն իրականացնել Սիրիայում, քանի որ Ասադն իր ինքնուրույն քայլերով սկսել է ձեռք չտալ նրան: Սակայն Թուրքիան առաջին հերթին ձգտում է դա իրականացնել Սիրիայի ներսից (իր համար առավել անվտանգ ու անհետեւանք տարբերակով), ինչի մասին է վկայում նաեւ Թուրքիայից Սիրիա զինված գրոհայինների գործուղումը:

Մյուս կողմից, Սիրիայում իշխանափոխություն կարող է տեղի ունենալ արտաքին միջամտության (ՆԱՏՕ) արդյունքում, ինչին արդեն ականատես ենք եղել Լիբիայի պարագայում: Սակայն թուրքիայի կողմից այս տարբերակը նախընտրելու կամ ողջունելու համար առկա են մի շարք զսպիչ գործոններ, ինչի համար էլ թուրքիան շարունակ հայտարարում է, որ դեմ է Սիրիայում արտաքին միջամտությանը: Այդ գործոններն են.

ա) սիրիական ժողովուրդ եւ ընդդիմություն – թուրքիային քաջ հայտնի է, որ սիրիական ժողովուրդն ու սիրիական ընդդիմությունը դեմ են երկրում արտաքին ռազմական միջամտությանը, ինչը նշանակում է, որ դրան սատարելու դեպքում թուրքիան խիստ բացասական արձագանքի կարժանանա նրանց կողմից: Դրա համար էլ թուրքական կողմը շարունակ հայտարարում է, որ դեմ է Սիրիայում արտաքին միջամտությանը՝ չնոռանալով մշտապես հանդես գալ սիրիական ժողովրդին աջակցելու մասին հայտարարություններ հնչեցնելով:

բ) ԱԵԼ – թուրքիան մեծապես կարելորդ է Սիրիայի հարցում ԱԵԼ-ի հետ իր գործողությունների զուգակցումը եւ համագործակցությունը, քանի որ հակառակ դեպքում կտուժեն արաբական երկրների հետ թուրքիայի հարաբերությունները: ԱԵԼ-ը դեմ է Սիրիայում արտաքին (արեւմտյան) ռազմական միջամտությանը, եւ ցանկանում է սիրիական հարցը լուծել իր շրջանակներում: Դրա համար էլ Դավութօղլուն հայտարարում է, թե տարածաշրջանային խնդիրներն առաջին հերթին պետք է լուծվեն հենց տարածաշրջանի սահմաններում:

գ) Իրան եւ Ռուսաստան – թուրքիան հասկանում է, որ Սիրիայում արտաքին միջամտության ողջունումը կհարուցի Ռուսաստանի ու Իրանի խիստ բացասական արձագանքը: Իրանական կողմը (բարձրաստիճան զինվորականների մակարդակով) մի քանի անգամ հայտարարել է, որ եթե ՆԱՏՕ-ն, որի անդամն է թուրքիան, ներխուժի Սիրիա, ապա դա կնշանակի պատերազմ հայտարարել Իրանին, եւ այդ դեպքում Իրանը կհարվածի թուրքիայի տարածքին: Նոյեմբերի սկզբին Քուվեյթի «Ալ-Սիյասահ» թերթը գրեց, որ Իրանն ու Սիրիան օտարերկրյա միջամտության դեմ պայքարի համատեղ պլան են մշակել: 6 ռազմաճակատից բաղկացած այդ պլանի առաջին փրախների թվում նշված էր նաեւ թուրքիայի անունը, որը պետք է միաժամանակ հարձակման ենթարկվի Իրաքի (PKK), Սիրիայի եւ Իրանի սահմանից: Բացի այդ, իրանական կողմը սպառնում է հարձակման ենթարկվելու դեպքում առաջինը հարվածել թուրքիայի տարածքում տեղակայվելիք ՆԱՏՕ հակահրթիռային պաշտպանության համակարգին:

դ) քրդեր – Թուրքիան հասկանում է, որ Սիրիայում արտաքին միջամտությունը կարող է հանգեցնել քրդական ինքնավարության ձեւավորմանը, ինչին նա ականատես է եղել հարեւան Իրաքի (հյուսիսի) պարագայում: Դրա համար էլ Սիրիայում ժողովրդական հուզումների սկսվելուց ի վեր նշվում է, թե Թուրքիան պատրաստ է Սիրիայի հյուսիսարեւելյան քրդաբնակ շրջաններում բուֆերային գոտու ձեւավորմանը: Վերջինս սեպի դեր է խաղալու առաջին հերթին Սիրիայի, ինչպես նաեւ Զյուսիսային Իրաքի ու Թուրքիայի հարավարեւելյան հատվածի քրդերի միջեւ: Դրա համար էլ որպես բուֆերային գոտու տեղանքի վայր է ընտրվել Սիրիայի հյուսիս-արեւելքում ընկած Քամիշլի քաղաքը:

¹ Օգոստոսի 9-ին Դամասկոսում տեղի ունեցած 6 ժամանոց հանդիպման վերջում Ասադը Դավութօղլուին ասել է. «Օսմանյան փառիշահների ժամանակաշրջանն անցել է: Սիրիան իր արաբական ինքնությամբ եւս մեկ անգամ չի ընդունի օսմանյան գերիշխանությունը: Անկարան այլեւս չի դառնա Արաբական աշխարհի հարցերի լուծման կենտրոն»:

² Ի դեպ, Heritage հիմնադրամի առաջատար փորձագետ Արիել Քոհենն էլ երդողանին համեմատում է Ստալինի հետ՝ նկատի ունենալով թուրքական բանակում իրականացրած մաքրումները:

ԻՐԱՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Սեւակ Սարուխանյան

Իրանն այսօր զգում է «արաբական գարնան» իր համար անցանկալի հետեւանքներից մեկը. Սիրիայում դեռեւս գարնանը սկսված հակակառավարական շարժումն աստիճանաբար ավելի է նմանվում քաղաքացիական պատերազմի, իսկ նախագահ Բ.Ասադի դիրքերը թուլանում են: Իշխանափոխությունը Սիրիայում եւ Բ.Ասադի տապալումը լուրջ հարված կարող են լինել Իրանի համար, քանի որ այսօր Սիրիան Իրանի միակ տարածաշրջանային դաշնակից պետությունն է:

Որքան էլ տարօրինակ է, սոււննի մահմեդական մեծամասնություն ունեցող Սիրիան, որի իշխանության ղեկին սոցիալիստական եւ աշխարհիկ «Բասս» կուսակցությունն է, եւ որի իրաքյան եղբայր կուսակցությունը Ս.Յուսեյնի ղեկավարությամբ ժամանակին դարձել էր Իրանի հիմնական տարածաշրջանային թշնամին, այսօր Իրանի միակ դաշնակից պետությունն է Սերձավոր Արեւելքում: Չնայած «Յիզբալլահը» վերջին տարիներին դարձել է Լիբանանի հիմնական եւ ամենաազդեցիկ քաղաքական ուժը, Լիբանանը՝ որպես պետություն, շարունակում է վարել մասամբ ոչ իրանամետ քաղաքականություն՝ ժամանակ առ ժամանակ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում քվեարկելով հակաիրանական բանաձեւերի օգտին:

Սիրիայի կարեւորությունն Իրանի համար պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

1. Վերջին 25 տարիների ընթացքում Սիրիան ապահովել է Լիբանանում իրանամետ «Յիզբալլահի» դիրքերի ամրապնդումը, կանուրջ հանդիսացել Իրանի եւ «Յիզբալլահի» միջեւ:

2. Սիրիան Իրանի հետ համատեղ ակտիվորեն աշխատում է տարածաշրջանում սաուդյան դիրքերի ամրապնդման կասեցման ուղղությամբ, սահմանափակում է Էր-Ռիադի ուժեղացումը:

3. Սիրիան եւ Լիբանանն այն հիմնական պետություններն են, որոնց տարածքներն Իրանի կողմից կարող են ուղղակիորեն օգտագործվել Իսրայելին հարվածելու համար, եթե վերջինս որոշի ռազմական հարված հասցնել Իրանի միջուկային օբյեկտներին:

4. Սիրիան թուրքիայի հիմնական արաբական հարեւանն է, որի նկատմամբ վերահսկողության հաստատումը կարող է Անկարայի համար մուտք ապահովել դեպի ողջ արաբական Մերձավոր Արեւելք՝ սահմանափակելով այստեղ իրանական ազդեցության աճը, ինչին թեհրանը ձգտել է վերջին 30 տարիների ընթացքում:

5. Սիրիան իրանական հատուկ ծառայությունների գլխավոր «գրասենյակն» է Մերձավոր Արեւելքում, որի միջոցով թեհրանը կազմակերպում է իր գործակցությունը «Համասի» հետ, զենքի ներմուծումը Պաղեստին, Լիբանան, իսկ մինչև եգիպտական հեղափոխությունը հենց Սիրիայում էր Իրանը վարում բանակցություններ հակամուրաբաքյան ամենաակտիվ ուժի՝ «Մուսուլման եղբայրների» հետ:

Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ կարող ենք նշել, որ Սիրիայի ներկայիս իշխանությունների տապալումը, ինչը, ինչպես ցույց են տալիս Եգիպտոսի եւ Լիբիայի դեպքերը, նաեւ նշանակում է քաոսի հաստատում երկրի տարածքում, Իրանի տարածաշրջանային քաղաքականության համար կարող են կործանարար նշանակություն ունենալ: Այս իմաստով, Սիրիայում սեփական դիրքերի եւ, հնարավորության դեպքում՝ Բ.Ասադի իշխանության պահպանումն Իրանի համար տարածաշրջանային առաջնահերթություն է հանդիսանում:

Պետք է ընդգծել, որ եթե Իրանին հաջողվի պահպանել Բ.Ասադի իշխանությունը, ապա թեհրանի համար նոր հնարավորություններ կբացվեն: Բանն այն է, որ ներկայիս գործընթացները Սիրիայում լարել են Դամասկոսի հարաբերություններն Իրանի տարածաշրջանային հակառակորդների հետ: Խոսքն առաջին հերթին Սաուդյան Արաբիայի մասին է, բայց ոչ միայն: Թեհրանի համար գուցե ամենակարեւոր գործոնն այն է, որ Թուրքիան վերածվել է Սիրիայի հիմնական քննադատող պետության եւ սկսել է ակտիվորեն աշխատել ընդդեմ Դամասկոսի: Այս իրողությունն, իր հերթին, խաչ է քաշում վերջին տարիներին թուրք-սիրիական հարաբերություններում արձանագրված դրական տեղաշարժերի վրա, փակում է թուրքական կապիտալի ներհոսքը Սիրիա եւ Անկարայի՝ Դամասկոսի հիմնական տարածաշրջանային գործընկերոջ վերածվելու հեռանկարները: Եթե Բ.Ասադին հաջողվի պահպանել իշխանությունը, ապա Սիրիան, հաշվի առնելով արաբական աշխարհի մեծ մասի եւ Թուրքիայի կողմից քաղաքական, գուցե նաեւ տնտեսական շրջափակումը, ուզի, թե չուզի, հիմնական աջակցություն սկսելու է ստանալ Իրանից, փորձելու է վերականգնել վերջինիս հետ ժամանակին ձեւավորված ռազմաքաղաքական դաշինքը, որը Ս.Հուսեյնի վարչակազմի տապալումից եւ

ամերիկա-սիրիական հարաբերություններում 2003-ից հետո սկսված դրական փոփոխություններից հետո բավական թուլացել էր:

Իրանի համար, այսպիսով, ստեղծվում է լավ հնարավորություն՝ ամրապնդելու Իրան–Իրաք–Սիրիա հակասուննիական «կիսալուսինը», որը սեպ է խրում դեռևս հիմնականում ամերիկամետ արաբական աշխարհի մեջ եւ փակում Թուրքիայի ու վերջինիս «սահմանափակ իսլամի» մուտքը Մերձավոր Արեւելք:

Այս համատեքստում Թեհրանն ակտիվացրել է քաղաքականությունը տարածաշրջանում: Աշնանն Իրանը կարելուք նշանակում կատարեց իր արտաքին քաղաքական գերատեսչությունում. 2011-ի հոկտեմբերի 20-ին Սիրիայի նախագահին հավատարմագրերը հանձնեց Իրանի նոր դեսպան Մոհամադ Շեյբանին:

Պետք է նշել, որ Սիրիայում իր առաքելությունը ստանձնելուց առաջ Մ.Շեյբանին Իրանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալն էր եւ Դամասկոս մեկնելու համար թողեց իր բարձր պաշտոնը: Մինչ առաքելության ստանձնումը Դամասկոսում Մ.Շեյբանին հանդիպեց Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեյի եւ նախագահ Մ.Ահմադինե-ժադի հետ, որոնցից, ամենայն հավանականությամբ, ստացավ հիմնական ցուցումները Սիրիայում աշխատելու վերաբերյալ: Մ.Շեյբանին հասարակ դիվանագետ չէ, նա բարձր պրոֆեսիոնալ է, որը ժամանակին ակտիվորեն համագործակցել է Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի հետ, իսկ Իրանի ԱԳՆ-ում ղեկավարել է Լիբանանի եւ «Հիզբալլահի» հետ հարաբերությունները: Նրա նշանակումն այս պաշտոնին կարող է անուղղակիորեն վկայել այն մասին, որ Թեհրանը որոշել է օգտագործել Պահապանների կորպուսի եւ «Հիզբալլահի» ուժերը Բ.Ասադի իշխանության պահպանման համար: Թեհրանը, մյուս կողմից, ակտիվորեն փորձում է օգնել Սիրիային՝ խուսափել տարածաշրջանային շրջափակումից. արդեն իսկ ակնհայտ է, որ Արաբական պետությունների լիգայի պատժամիջոցները Սիրիայի դեմ չեն կիրառվելու ոչ Լիբանանի, ոչ էլ Իրաքի կողմից, որոնց սահմանները Սիրիայի հետ մնալու են բաց: Այս մասին են վկայում 2 կարելուք հայտարարություններ.

1. Նոյեմբերի 20-ին «Հիզբալլահի» առաջնորդ Հ.Նասրալան հայտարարեց, որ Լիբանանը մնալու է Սիրիայի բարեկամը եւ չի մասնակցելու հարեւան պետության շրջափակմանը: Հաշվի առնելով «Հիզբալլահի» գերիշխող դիրքը Լիբանանի խորհրդարանում եւ կառավարական կոալիցիայում՝ Հ.Նասրալայի հայտարարությունը պետք է համարել պետական դիրքորոշում: Նշենք նաեւ, որ «Հիզբալլահի» առաջնորդը

զգուշացրել է իր հայտարարությունում, որ ցանկացած ռազմական միջամտություն սիրիական գործերում «պայթեցնելու» է տարածաշրջանը՝ հաստատելով այն կանխատեսումները, թե «Հիզբալլահին» ու Իրանն ուղղակիորեն կարող են խառնվել հնարավոր ռազմական գործողություններին:

2. Դեկտեմբերի 4-ին Իրաքի վարչապետ Ն. ալ-Մալիքին պետական հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարեց, որ իր պետությունը չի պաշտպանում ոչ մի պատժամիջոց Սիրիայի դեմ եւ չի պատրաստվում միանալ հակասիրիական որեւէ կոալիցիայի: Միեւնույն ժամանակ, Մալիքին նշեց, որ պատրաստ է բանակցությունների մեջ մտնել սիրիական ընդդիմության հետ, որպեսզի կամուրջ ստեղծի հասարակության մի մասի եւ իշխանությունների միջեւ՝ դրանով իսկ խրախուսելով «ազգային շահերին համապատասխանող» բարեփոխումների իրականացումը:

Պետք է ընդգծել, որ սիրիական ընդդիմության հետ երկխոսելու քաղաքականությունը որդեգրվել է նաեւ Իրանի կողմից: Սակայն, ի տարբերություն Իրաքի, Իրանն արդեն կոնկրետ քայլերի է գնացել այս ուղղությամբ: Նոյեմբերի 14-ին Սիրիայում Իրանի նորանշանակ դեսպան Մ.Շեյբանին պաշտոնական բանակցություններ է անցկացրել սիրիական դեմոկրատական ընդդիմության առաջնորդ Խ.Մաննայի հետ, որոնց ընթացքում քննարկվել են ընդդիմության եւ իշխանությունների հետ ակտիվ երկխոսություն սկսելու հնարավորությունները:

Եթե Բ.Ասադին հաջողվի ընդհանուր հակակառավարական շարժումից դուրս հանել չափավոր եւ ժողովրդավարական ընդդիմությանը, ապա քաղաքական պայքարը Սիրիայում կբյուրեղանա. մի կողմում կլինեն պետությունը եւ այն ուժերը, որոնք բարեփոխումներ են պահանջում, մյուս կողմում՝ Սիրիայում իսլամական պետության ստեղծման համար պայքարողները: Նման երկընտրանքի առաջարկումը կարող է փոխել սիրիական հասարակության դիրքորոշումը երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ:

Միաժամանակ, սիրիական աշխարհիկ ընդդիմության համար այսօր երկխոսությունն իշխանությունների հետ եւս անհրաժեշտ է: Այն կարծես թե լավ գիտակցում է, որ ներկայիս իշխանությունների տապալման դեպքում իշխանության գալու իր շանսերը նվազագույն են. իշխանության ղեկին, ամենայն հավանականությամբ, կհայտնվեն նրանք, ովքեր կրակում են բանակի վրա եւ պայթեցնում ոստիկանության շենքերը: Եգիպտոսում եւ Թունիսում անցած ընտրություններն էլ ցույց տվեցին,

թե ովքեր են հաղթում հետհեղափոխական ժողովրդավարական ընտրություններում:

Այս բոլոր հանգամանքները գիտակցելով՝ Իրանը փորձում է խրախուսել երկխոսությունն իշխանությունների և դեմոկրատական ընդդիմության միջև, հասկանալով, որ վերջիններիս միջև կա համագործակցության մեծ պոտենցիալ:

Ինչեւէ, պետք է նշել, որ Իրանի համար այսօր Սիրիայում չկա Բ.Ասադին որեւէ այլընտրանք: Թեհրանն այսուհետ էլ փորձելու է ամեն կերպ աջակցել Սիրիայի ներկայիս իշխանությանը, լինի ռազմական ուժի կիրառման, թե երկխոսության խրախուսման ճանապարհով:

**ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ
*Արտաշես Տեր-Հարությունյան***

Սույն թվականի դեկտեմբերի 6-ին ժնեւում, հանդիպելով արտերկրում գտնվող սիրիական ընդդիմության ներկայացուցիչների հետ, Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջիլարի Բլինթոնը հայտարարեց, թե սիրիացիները պետք է տապալեն Բաշար ալ-Ասադի վարչակազմը եւ երկրում հաստատեն օրենքի իշխանություն: Ամերիկյան դիվանագիտության ղեկավարի նման՝ աննախադեպ կոշտ հայտարարությունն, անշուշտ, կոչված է ի ցույց դնելու ԱՄՆ ու նրա դաշնակիցների վճռականությունը սիրիական հարցում, սակայն այն նաեւ վկայում է երկու շատ կարեւոր հանգամանքի մասին.

- ոչ միայն աճում է լարվածությունը սիրիական հարցի շուրջ, այլեւ փոխվել կամ փոխվում է այդ լարվածության տրամաբանությունը. եթե նախորդ ամիսների ընթացքում ԱՄՆ եւ նրա դաշնակիցների հիմնական նպատակն էր տեղեկատվական, դիվանագիտական ու տնտեսական ճնշում բանեցնել Դամասկոսի նկատմամբ՝ զիջումներ կորզելու համար, ապա այժմ՝ ավելի շուտ զործ ունենք ալ-Ասադի վարչակազմի տապալման նախապատրաստման ուղղված տեղեկատվական ու դիվանագիտական կամպանիայի ծավալման հետ,

- սիրիական հարցը դարձել է մերձավորարեւելյան քաղաքականության գլխավոր հարցը. Դամասկոսի շուրջ ընթացող զարգացումներում ներգրավված են ոչ միայն միջազգային ուժի կենտրոններ, այլեւ տարածաշրջանային բոլոր տերությունները, իսկ հետագա զարգացումներն ազդելու են ուժերի տարածաշրջանային փոխդասավորվածության վրա:

Իրավիճակային դիտարկում

Երեք հիմնական հանգամանքներ ենք առանձնացրել, որոնք, մեր կարծիքով, առավել ցայտուն են բնութագրում սիրիական հարցի շուրջ ներկայում ստեղծված իրավիճակը եւ ընթացող զարգացումները:

Առաջին՝ տեղի են ունենում ռազմական բնույթի տպավորիչ նախապատրաստություններ:

Նոյեմբերի վերջին – դեկտեմբերի սկզբին Միջերկրական ծովում՝ Սիրիայի ափերի մոտ խմբավորվեցին ռազմածովային երկու նավատորմեր՝ ամերիկյան George H.W. Bush ավիակրի գլխավորությամբ հարվածային ռազմանավերի խումբը եւ ռուսական Адмирал Кузнецов ավիակրի առաջնորդությամբ ռուսական հարվածային նավերի խումբը:

Սիրիայի ափերի մոտ ռազմանավերի նման կուտակումից հետո ռուսական Интерфакс լրատվական գործակալությունը, հղում կատարելով Ռուսաստանի պաշտպանության նախարարությունում իր աղբյուրներին, գրեց, թե \$300 մլն-ով Մոսկվան Դամասկոսին է վաճառել առափնյա պաշտպանության «Бастيون» 2 համալիրներ, որոնցից յուրաքանչյուրը զինված է «Яхонт» տեսակի 36 հրթիռներով: Իսրայելական աղբյուրների փոխանցմամբ, համալիրները եւ հրթիռները ռուսական կողմը շտապ կարգով է Սիրիա հասցրել՝ օգտագործելով ռազմատրանսպորտային ինքնաթիռներ:

Նշենք, որ «Бастيون» համալիրները Ռուսաստանի ռազմարդյունաբերության նոր մշակումներից են եւ այդ երկրի զինված ուժերի կազմում մարտական հերթապահության են անցել անցած տարվանից: «Яхонт» հրթիռների հարվածային հեռահարությունը կազմում է մինչեւ 300կմ, նրանք նախատեսված են ռազմական բոլոր տեսակի նավերի ոչնչացման համար (սուզանավերից բացի): Հիշեցնենք, որ, օրինակ, Լիբիայի դեմ ԱՄՆ ու նրա դաշնակիցների ռազմական գործողությունների ժամանակ էական դեր խաղացին հենց ռազմածովային ուժերը, եւ Սիրիայում առափնյա պաշտպանության նման համալիրների հայտնվելը կարող է զգալիորեն սահմանափակել ԱՄՆ ու նրա դաշնակիցների գործողությունների հնարավորությունը: Պատահական չէ, որ Սիրիա նշված զինատեսակների առաքման մասին տեղեկության ի հայտ գալուց հետո, իսրայելական աղբյուրների փոխանցմամբ, ամերիկյան կողմը որոշեց Սիրիայի ափերից հեռացնել George H.W. Bush ավիակիրը¹:

Ի հավելումն նշվածին, դեկտեմբերի 12-ին թուրքական «Zaman» պարբերականը գրեց, թե սիրիական բանակն իր զինանոցում առկա «Scud» տեսակի հրթիռների վրա սկսել է տեղադրել քիմիական մարտագլխիկներ: Ըստ թերթի, օտարերկրյա զինված ներխուժման դեպքում քիմիական զենք օգտագործելու մասին որոշումը Բաշար ալ-Ասադի վարչակազմում կայացրել են դեռ նոյեմբերի կեսերին, եւ խոսքը մոտ 600 հրթիռների մասին է, որոնց հեռահարությունը կարող է հասնել մինչեւ 300կմ: Հղում կատարելով թուրքական հետախուզությանը՝ «Zaman»-ը նաեւ փոխանցում է, որ «Scud»-ների արձակման համար շարժական 21 համալիր մոտեցվել է սիրիա-թուրքական սահմանին:

Շարունակելով սիրիական հրթիռների թեման՝ նշենք, որ դեկտեմբերի 3-ին կենտրոնական Սիրիայում՝ Պալմիրա քաղաքի մոտ, բանակի լայնամասշտաբ զորավարությունների ժամանակ փորձարկվեցին «երկիր–երկիր» տեսակի, մինչեւ 200կմ հեռահարություն ունեցող հրթիռներ:

Եվ վերջապես, ավարտելով ռազմական նախապատրաստությունների մասը՝ դեռ հոկտեմբերի վերջին տեղեկություն տարածվեց, որ սիրիական բանակի ինժեներական զորամասերը սկսել են ականապատել Յորդանանի, Իրաքի, Թուրքիայի եւ Լիբանանի հետ Սիրիայի սահմանները:

Երկրորդ՝ փոխվում է իրավիճակը բուն Սիրիայում:

Նոյեմբերի 16-ին հարձակման ենթարկվեց Դամասկոսին մոտ գտնվող Չարաստա քաղաքում տեղակայված սիրիական Օդուժի հետախուզության կենտրոնակայանը²: Հաղորդվում է, որ հարձակումը հնարավոր է եղել հետ մղել միայն այն բանից հետո, երբ օդ է բարձրացվել մարտական ուղղաթիռ: Եթե ուղղաթիռի մասով լուրը համապատասխանում է իրականությանը, ապա դա կարող է նշանակել, որ կենտրոնակայանը հարձակման է ենթարկվել արհեստավարժ խմբի կողմից, քանի որ Սիրիայում եւ նրա շուրջ առկա նման լարվածության պայմաններում ալ-Ասադների վարչակազմի համար էական հանդիսացող Օդուժի հետախուզության կենտրոնակայանը պետք է որ լավ պաշտպանված լինի: Թեեւ, լրատվամիջոցների փոխանցմամբ, հարձակումն իրականացրել են «Սիրիայի ազատ բանակի» մարտիկները, սակայն անվտանգության գծով արեւմտյան ու ռուսական փորձագետներն անմիջապես կասկած հայտնեցին այդ կապակցությամբ՝ նշելով, թե ավելի հավանական է, որ հարձակման հետեւում կանգնած է եղել Սիրիա ներթափանցած ամերիկյան կամ Վաշինգտոնի դաշնակից հանդիսացող երկրների (բրիտանական, ֆրանսիական, թուրքական, իսրայելական, կատարյան կամ հորդանանյան) հատուկ նշանակության ջոկատներից մեկը:

Բայց էլ ավելի կարելի է բուն հարձակման փաստի նշանակությունը: Սիրիայում եւ նրա սահմաններից դուրս իր կարողություններով հայտնի Օդուժի հետախուզության կենտրոնակայանի նկատմամբ գրոհը կոչված է ցույց տալու սիրիական հասարակությանը, որ ալ-Ասադների վարչակազմը կորցնում է Սիրիայում իրավիճակի նկատմամբ վերահսկողությունը, քանի որ եթե անվտանգության երաշխիքներ չունի անգամ այդ կառույցը, ապա նման երաշխիք այլեւս չեն կարող ունենալ ոչ ոք եւ ոչ մի կառույց:

Ուշագրավ է, որ հետագա շաբաթներին Սիրիայի տարբեր բնակավայրերում հարձակումների ենթարկվեցին նույն կառույցի տեղական երկու կենտրոնակայաններ, ոստիկանական բաժանմունքներ, ռազմակայաններ

եւ իշխող «Բասա» կուսակցության տեղական գրասենյակներ: Պակաս տպավորիչ չէին նաեւ դեկտեմբերի 8-ին Յոնս քաղաքում գտնվող նավթավերամշակման գործարան տանող նավթամուղի եւ դեկտեմբերի 12-ին Ռասթան քաղաքի մոտով անցնող գազամուղի պայթեցումները:

Դամասկոսը հարձակումների համար մեղադրում է օտարերկրյա՝ ամերիկյան, իսրայելական ու թուրքական հատուկ ծառայություններին: Մյուս կողմից, Սիրիայի վերաբերյալ վերջին շրջանի վերլուծականներում ավելի հաճախ կարելի է հանդիպել այն միտքը, թե ներկայում արեւմտյան հատուկ ծառայությունների ինտենսիվ աջակցությամբ Սիրիայում փորձ է արվում ստեղծել քաղաքացիական պատերազմին մոտ ինչ-որ վիճակ, եւ այդ նպատակով երկրում գործող ամերիկյան եւ դաշնակիցների հատուկ նշանակության ջոկատներն իրականացնում են դիվերսիոն-հետախուզական գործողություններ, ընդդիմադիր խմբավորումների եւ բանակը թողած զինվորականների համար ապահովում են զենք-զինամթերքի առաքումներ: Գաղտնիք չէ, որ քաղաքացիական պատերազմը կամ լայնածավալ զինված ապստամբությունը Սիրիայում հնարավորություն կտա ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին ավելի ակտիվ ներգրավվել սիրիական հարցում, եւ այդ առումով նմանությունները «լիբիական սցենարի» հետ ակնհայտ են:

Սակայն, ի տարբերություն մեկուսացման մեջ հայտնված Քադաֆիի, ալ-Ասադների վարչակազմն ունի առնվազն տարածաշրջանային դաշնակիցներ՝ Իրանն ու լիբանանյան «Յիզբալլահ» շարժումը, որոնց կենսական շահերից է բխում ալ-Ասադների վարչակազմի գոյությունը: Եվ այս առումով իրավիճակը Սիրիայի շուրջ տարբերվում է Լիբիայից:

Երրորդ՝ զարգացումները Սիրիայի շուրջ արդեն իսկ իրենց զգալ են տալիս մերձավորարեւելյան շատ հարցերում, բայց եւ իրենց հերթին՝ տարածաշրջանային որոշ իրադարձություններ գալիս են ցույց տալու, որ իրադրությունը Սիրիայի շուրջ միայն սրվում է:

Դեկտեմբերի 9-ին Սիրիային հարեւան Լիբանանում՝ Տիր քաղաքի մոտ, հարձակման ենթարկվեց ՄԱԿ խաղաղապահ առաքելության կազմում ծառայություն իրականացնող ֆրանսիական զորամիավորումը, վիրավորվեցին հինգ զինծառայողներ: Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուպեն հայտարարեց, թե Փարիզում հավատում են, որ հարձակման հետեւում կանգնած են եղել սիրիական հատուկ ծառայությունները: Չավանական է, որ այդպես էլ կա, որովհետեւ, եթե Դամասկոսը կամ նրա դաշնակիցները՝ Իրանը, լիբանանյան «Յիզբալլահ» շարժումը, որոշեն հասցնել պատասխան հարվածներ, նրանք առաջին հերթին դա կարող են անել Սիրիային հարակից երկրներում:

Դեկտեմբերի 6-ին Բեյրութում՝ «Հիզբալլահի» կազմակերպած հանրահավաքի ժամանակ, երեք ու կես տարվա ընդմիջումից հետո հանրության առջև հայտնվեց եւ ելույթ ունեցավ շարժման գլխավոր քարտուղար Յասան Նասրալան, որը հայտարարեց, թե «Հիզբալլահը» սատարում է Բաշար ալ-Ասադին:

Նասրալայի ելույթի հաջորդ օրն իսրայելական աղբյուրները գրեցին, թե դեկտեմբերի սկզբին Դամասկոսից հարավ ընկած ռազմական օդանավակայանում վայրէջք է կատարել Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի շուրջ 150 մարտիկներին տեղափոխող ինքնաթիռը: Նշվում է, որ այդ 150 հոգին պետք է մեկնեն Լիբանան՝ «Հիզբալլահի» հրթիռային զինանոցը մարտական բարձր պատրաստության բերելու համար:

Սիրիական հարցին առնչվող տարածաշրջանային ուշագրավ իրադարձություններից էր Reuters-ի հաղորդումն այն մասին, որ Դամասկոսում գտնվող պաղեստինյան «Համաս» շարժումը Սիրիայից աստիճանաբար դուրս է բերում եւ Եգիպտոս ու Կատար տեղափոխում իր ղեկավար կազմն ու ֆինանսական միջոցները՝ մտավախություն ունենալով, որ զարգացումներն այդ երկրում կարող են անկանխատեսելի ընթացք ստանալ:

Եվ վերջապես, սիրիական հարցի հետ պետք է կապել նոյեմբերի 20-ին Los Angeles Times-ի հրապարակումը, ըստ որի՝ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը փակել է Բեյրութում գտնվող իր կայանը, որովհետև Լիբանանում եւ Իրանում հայտնաբերվել ու ձերբակալվել են ԿՀՎ հետախուզական ցանցի բազմաթիվ անդամներ, ովքեր տվյալներ էին հավաքում նաև Սիրիայի վերաբերյալ:

Յետևություններ

Վերը նկարագրվածը ցույց է տալիս, որ իրավիճակը Սիրիայում եւ նրա շուրջ աստիճանաբար լարվում է: Այս պարագայում գլխավոր է դառնում այն հարցը, թե իրավիճակն ինչպես պետք է «հանգուցալուծվի»:

Մյուս կողմից, ինչպես նշեցինք, ի տարբերություն լիբիականի, սիրիական հարցն ուղղակի կապված է ուժերի տարածաշրջանային փոխդասավորվածության հետ, ուր շոշափվում են ԱՄՆ ու նրա դաշնակիցների, Իրանի, Ռուսաստանի եւ Չինաստանի լուրջ, իսկ երբեմն նաև կենսական շահերը: Սա նշանակում է, որ ցանկացած տեսակի «հանգուցալուծում» դժվար թե սահմանափակվի միայն Սիրիայի սահմաններով:

¹ «Бастион» համալիրների եւ «Яхонт» հրթիռների Սիրիա առաքումը լուրջ դժգոհություն առաջացրեց ԱՄՆ-ում եւ Իսրայելում: Ամերիկյան լրատվամիջոցների ներկայացմամբ, Սպիտակ տան հետ վարչապետ Նեթանյահուի խորհրդակցությունից հետո Մոսկվա ուղեւորվեց Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը՝ հրթիռների Սիրիա առաքումը կանխելու համար, սակայն՝ ապարդյուն:

² Սիրիական զինված ուժերի Օդուժի հետախուզությունն, իրականում, հանդիսանում է այդ երկրի հետախուզական եւ հակահետախուզական գլխավոր մարմինը: Ըստ որոշ գնահատականների, այն ունի մոտ 20 հազար աշխատակիցներ, հրամանատարական կազմում գերակշռում են ավափիները, ղեկավարն է գեներալ Ջամիլ Յասսանը, որն ուղղակի ենթարկվում է Բաշար ալ-Ասադի կրտսեր եղբորը՝ Մահեր ալ-Ասադին: Վերջինս Սիրիայի զինված ուժերի էլիտար մասի՝ հանրապետական գվարդիայի հրամանատարն է:

2011-Ի ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

2011թ. սկզբում ԱՄՆ արտաքին քաղաքականության տարեկան առաջնահերթություններ էին դիտվում Իրանի միջուկային ծրագրի շուրջ տեղաշարժերը, Աֆղանստանում եւ Պակիստանում իրավիճակի կայունացումը, իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններում առաջընթացի արձանագրումը, Ռուսաստանի հետ 2009թ. մեկնարկած «վերագործարկման» շարունակումը՝ Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման խնդրում առկա տարածայնությունների հաշվառմամբ: 2011թ. հունվարից արաբական մի շարք պետություններում սկսված հեղափոխական գործընթացները որոշակի վերակարգավորումներ մտցրին ԱՄՆ արտաքին քաղաքականության օրակարգում՝ կարեւորելով «արաբական գարնան» նկատմամբ հստակ դիրքորոշման ձեւակերպման խնդիրը: Փորձենք ստորեւ վերլուծել նշված ուղղություններով ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական ձեռքբերումներն ու ձախողումները:

2011թ. Իրանի միջուկային ծրագրի շուրջ զարգացումները շարունակվեցին ԱՄՆ-ի համար անբարենպաստ ուղով: Օբամայի վարչակազմը Իրանի հանդեպ որդեգրել էր «մտրակի եւ քաղցրաբլիթի» քաղաքականություն՝ Իրանին առաջարկելով հրաժարվել միջուկային ծրագրի իրականացումից եւ դրա դիմաց ստանալ արեւմտյան համակարգում որոշակի ինտեգրման հնարավորություններ կամ կանգնել նոր պատժամիջոցների կիրառման վտանգի առջեւ: ԱՄՆ իշխանությունները հայտարարում էին, որ երկխոսության առաջարկի մերժման դեպքում ուժային այլ կենտրոնների հետ համատեղ իրականացվող պատժամիջոցներն անպայման կհանգեցնեն դրական արդյունքների: Սակայն 2011թ. Իրանի իշխանությունները շարունակեցին միջուկային ծրագրի իրականացումը: Նոյեմբերին ԱԵՍԳ հրապարակած զեկույցը փաստում է այս առումով դրական զարգացումների բացակայությունը: Ձեկույցի հրապարակումից հետո Իսրայելը հայտարարեց Իրանին ռազմական հարված հասցնելու պատրաստակամության մասին: Պետք է կարծել, որ Մերձավոր Արեւելքում ռազմական

գործողությունների նոր թատերաբեմի ձեւավորումը ԱՄՆ-ի համար խիստ անցանկալի սցենար է՝ հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված բարդագույն վիճակը: Ըստ այդմ, Օբամայի վարչակազմը շարունակելու է Իրանի դեմ ճնշումների ուժեղացման քաղաքականությունը՝ մյուս կողմից փորձելով ամեն կերպ կանխել խնդրի ռազմական լուծման տարբերակը, հաշվի առնելով նաեւ հաջորդ տարի նախատեսված նախագահական ընտրությունները: Այնուամենայնիվ, հստակ է, որ Իրանի հարցում Օբամայի վարած քաղաքականությունը դրական արդյունքների չի հանգեցրել:

Իրավիճակը շարունակում է լարված մնալ նաեւ Աֆղանստանում եւ Պակիստանում: 2011թ. մայիսին Օսամա բեն Լադենի սպանությունը որոշակիորեն բարձրացրեց Օբամայի վարկանիշը երկրի ներսում, սակայն տարածաշրջանի զարգացումների վրա այդ գործողության ազդեցությունը շատ ավելի փոքր էր: Պակիստանը շարունակում է աջակցություն ցուցաբերել Աֆղանստանում գործող թալիբների՝ ի դեմս նրանց տեսնելով այդ պետությունում սեփական կենսական շահերի ապահովման եւ Զնդկաստանի ազդեցության հակակշռման գործուն միջոց: Միաժամանակ, նոյեմբերին ՆԱՏՕ ձեռնարկած գործողությունների հետեւանքով Պակիստանի շուրջ երկու տասնյակ զինծառայողների սպանությունը զգալիորեն սրել է ԱՄՆ – Պակիստան հարաբերությունները. վերջինս կասեցրել է սեփական տարածքով Աֆղանստանում տեղակայված ՆԱՏՕ ուժերին մատակարարումների իրականացումը: Չնայած ԱՄՆ եւ նրա դաշնակիցների ձեռնարկած քայլերին, Աֆղանստանում եւս իրավիճակը շարունակում է անկայուն մնալ, չափազանց դանդաղ է ընթանում Աֆղանստանի պետական հաստատությունների ձեւավորման գործընթացը: Ստեղծված պայմաններում 2014թ. վերջին Աֆղանստանից ՆԱՏՕ ուժերի դուրսբերումը, ինչի մասին հայտարարվեց դաշինքի 2010թ. նոյեմբերին անցկացված Լիսաբոնյան գագաթաժողովում, շատ վերլուծաբաններ իրատեսական չեն համարում: Ներկայում ԱՄՆ-ը փորձում է քայլեր ձեռնարկել տարածաշրջանում որոշակի կայունության ապահովման համար՝ այդ թվում միջազգային հանրության դերակատարների ակտիվ ներգրավմամբ, ինչին էր ուղղված 2011թ. դեկտեմբերին Բոննում միջազգային գագաթաժողովի անցկացումը: Սակայն հանդիպմանը Պակիստանի ներկայացուցիչների բացակայությունը վկայում է այս խնդրում առկա լուրջ տարածայնությունների մասին:

Չափազանց քիչ առաջընթաց է գրանցվել նաեւ իսրայելա-պաղեստինյան բանակցություններում: Օբամայի վարչակազմը 2011թ. փորձեց որոշակի տեղաշարժ արձանագրել այս խնդրում: Մայիսի 19-ին Մերձավոր

Արեւելքում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներին նվիրված ելույթում Օբաման հայտարարեց, որ Իսրայելի եւ Պաղեստինի միջեւ ցանկացած համաձայնություն պետք է ենթադրի վերադարձ 1967թ. սահմաններին՝ որոշակի տարածքների փոխանակմամբ: Սակայն դրանից ընդամենը մի քանի օր անց, ելույթ ունենալով ԱՄՆ Կոնգրեսում, Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հայտարարեց, որ Իսրայելը երբեք չի վերադառնա այդ սահմաններին, քանի որ 1967թ. սահմաններում Իսրայելը պաշտպանված լինել չի կարող: Միաժամանակ նա նշեց, որ Երուսաղեմը չի կարող բաժանվել եւ պետք է մնա Իսրայելի մայրաքաղաք: Նեթանյահուն բացառեց նաեւ պաղեստինցի փախստականների վերադարձն Իսրայել պետության տարածք: Իսրայելի իշխանությունների կողմից Օբամայի առաջարկած խաղաղության ծրագրի մերժումից հետո բանակցությունները հայտնվել են փակուղում: Ճիշտ է, ԱՄՆ-ին հաջողվեց հետաձգել Պաղեստինի անկախ պետության ճանաչման խնդրի քննարկումը ՄԱԿ Անվտանգության խորհրդում եւ խուսափել այս հարցում վետոյի իրավունքի կիրառումից, ինչը զգալի վնաս կհասցներ ԱՄՆ կերպարին մահմեդականների շրջանում, սակայն ակնհայտ է, որ իսրայելապաղեստինյան հակամարտության խնդրում Օբամայի վարչակազմի ձեռքբերումները բավական համեստ են, եւ բացակայում են ապագային ուղղված կոնկրետ ծրագրերը:

Որոշակի հետընթաց է արձանագրվել նաեւ Ռուսաստանի հետ հարաբերություններում: 2009թ. հռչակված «վերագործարկման» շնորհիվ կողմերը կարողացան կարգավորել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ստորագրել ռազմավարական նշանակության զենքերի կրճատման մասին նոր պայմանագիրը, Ռուսաստանը թույլատրեց Աֆղանստանում տեղակայված ՆԱՏՕ ուժերի համար նախատեսված մատակարարումների տարանցումն իր տարածքով: Սակայն Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի տեղակայման խնդրում կողմերը չեն կարողացել հաղթահարել տարածայնությունները: ՆԱՏՕ Լիսաբոնի գագաթաժողովում Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է համագործակցել դաշինքի հետ այս խնդրում եւ ձեւավորել հակահրթիռային պաշտպանության միասնական համակարգ, սակայն ՆԱՏՕ-ն, ընդունելով հանդերձ այս խնդրում Ռուսաստանի հետ համագործակցութան կարելիությունը եւ շեշտելով, որ համակարգն ուղղված չէ Ռուսաստանի շահերի դեմ, հրաժարվում է Ռուսաստանին տրամադրել այնպիսի իրավունքներ, որոնք հնարավորություն կտան պաշտոնական Մոսկվային անհրաժեշտության դեպքում խոչընդոտել համակարգի անփափան գործունեությանը: Այս խնդրի շուրջ

2011թ. ընթացող բանակցությունները դրական արդյունքների չեն հանգեցրել: Ստեղծված պայմաններում Դմիտրի Մեդվեդևը նոյեմբերի 23-ին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ հակահրթիռային պաշտպանության համակարգի վերաբերյալ՝ նշելով, որ եթե ՆԱՏՕ-ն շարունակի Ռուսաստանի հիմնավոր մտահոգությունների անտեսման քաղաքականությունը, պաշտոնական Մոսկվան հարկադրված կլինի դիմել պատասխան քայլերի, այդ թվում Կալինինգրադի մարզում «Իսկանդեր» հրթիռային համակարգերի տեղակայումն ու Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգերը որպես ռուսական հրթիռների թիրախ ընտրելը:

Ռուս-ամերիկյան հարաբերություններում լարվածության հավելյալ աղբյուրի պատճառ դարձան Ռուսաստանում դեկտեմբերի 4-ին անցկացված Պետական դումայի ընտրությունները: 2011թ. դեկտեմբերի 6-ին Ելույթ ունենալով ԵԱՀԿ Նախարարների խորհրդի հերթական գագաթաժողովում՝ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթոնը քննադատեց ընտրությունների ընթացքը՝ նշելով տեղ գտած բազմաթիվ խախտումների մասին: Բլինթոնի այս հայտարարությունը բավական կոշտ արձագանք ստացավ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի եւ վարչապետ Վլադիմիր Պուտինի կողմից: Վերջինս ԱՄՆ-ին մեղադրեց Ռուսաստանում ընտրությունների դեմ ընթացող բողոքի գործողությունների խթանման մեջ: Ակնհայտ է, որ ընտրությունների վերաբերյալ ընթացող բանավեճը հավելյալ լարվածություն է առաջ բերել երկու պետությունների միջև, ինչը, հաշվի առնելով Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգի շուրջ ստեղծված վիճակը, կարող է փաստացի դադարեցնել հարաբերությունների «վերագործարկումը»:

ԱՄՆ արտաքին քաղաքականության կարեւոր մարտահրավերներից էին «արաբական գարնան» իրադարձությունները: Գործընթացի սկզբում Օբամայի վարչակազմը որդեգրել էր բավական զգույշ դիրքորոշում՝ կոչ անելով իշխանություններին եւ ընդդիմությանը ձեռնպահ մնալ իրավիճակի ապակայունացումից: ԱՄՆ իշխանությունների դիրքորոշումը որոշակի փոփոխության սկսեց ենթարկվել 2011թ. փետրվարի սկզբից, երբ պաշտոնական Վաշինգտոնը հանդես եկավ Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականի պահանջով: ԱՄՆ իշխանություններն էլ ավելի ակտիվ դիրքորոշում ստանձնեցին լիբիական իրադարձությունների ժամանակ՝ ՆԱՏՕ շրջանակում ակտիվորեն մասնակցելով գնդապետ Քադաֆիի իշխանության տապալմանը: Ներկայումս Միացյալ Նահանգները բավականաչափ կոշտ մոտեցում է որդեգրել Սիրիայի նկատմամբ՝ կիրառելով հավելյալ պատժամիջոցներ եւ

բանակցություններ սկսելով Սիրիայի ընդդիմության ներկայացուցիչների հետ:

Արաբական աշխարհում ընթացող իրադարձություններում ԱՄՆ-ը զգալի չափով օգտվում է Թուրքիայի աջակցությունից: Այս խնդրում շահերի որոշակի համընկնումը, որը հենված է արաբական պետություններում չափավոր իսլամական հայացքներ ունեցող քաղաքական ուժերին աջակցելու վրա, ինչպես նաև Թուրքիայի հետ սեպտեմբերին կնքված համաձայնագիրը՝ այդ պետության տարածքում հակահրթիռային պաշտպանության համակարգի տարրերի տեղակայման մասին, նպաստեցին թուրք-ամերիկյան հարաբերությունների որոշակի բարելավմանը:

2011թ. ԱՄՆ արտաքին քաղաքականության կարելուր ուղղություններից էր միջազգային հարաբերություններում ամերիկյան առաջատար դիրքերի պահպանումը եւ, միաժամանակ, նոր ձեւավորվող ուժային կենտրոնների, առաջին հերթին՝ Չինաստանի հետ հարաբերությունների նոր մոդելի մշակումը: Այս համատեքստում Օբամայի վարչակազմը, թերեւս, առաջ է շարժվում ամերիկյան Foreign Affairs պարբերականում (2009թ. սեպտեմբեր/հոկտեմբեր) Ջրիզնել Բժեզինսկու կողմից հրապարակված «Նոր օրակարգ ՆԱՏՕ-ի համար» վերնագիրը կրող հոդվածում առաջ քաշված տեսակետների համաձայն: Հոդվածում Բժեզինսկին նշում է, որ միջազգային հարաբերություններում աստիճանաբար ի հայտ են գալիս ուժային նոր կենտրոններ եւ արեւմտյան գերիշխանությունը մոտենում է ավարտին՝ ձեւավորելով ուժային տարբեր կենտրոններից բաղկացած ցանցային համակարգ: Միեւնույն ժամանակ, նա նշում է, որ Արեւմուտքը, հանձին ՆԱՏՕ-ի, ունի բոլոր հնարավորությունները նոր ձեւավորվող ցանցում հիմնական կապող օղակի դերակատարություն ստանձնելու համար: ԱՄՆ ներկա վարչակազմի խնդիրն է կառուցողական հարաբերություններ ձեւավորել ուժային նոր կենտրոնների հետ եւ միաժամանակ ապահովել ԱՄՆ կենտրոնական դերակատարությունը միջազգային հարաբերությունների նոր ցանցում:

ՀԱՐԱՓՈՓՈՒՆ ԱՇԽԱՐՀ

2011-ի «աննկատ» իրադարձություններ, որոնք 2012-ին ընդունակ են դառնալ կենտրոնական թեմաներ

Հնդկաստանի ռազմական հզորության մեծացում

Այսօր Հնդկաստանը հանդիսանում է սպառազինությունների խոշորագույն ներմուծողն աշխարհում, ինչը 2011թ. իր տարեկան զեկույցում հաստատում է Աշխարհի խնդիրների ուսումնասիրության ստոկհոլմյան միջազգային ինստիտուտը, որը հետևում է զենքի առևտրին ողջ աշխարհում: 2006–2011թթ. նրան բաժին է ընկել սպառազինությունների արտասահմանյան գնումների համաշխարհային ծավալի ինը տոկոսը՝ հիմնականում Ռուսաստանից: Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների վաշինգտոնյան կենտրոնի վերլուծության տվյալների համաձայն՝ մինչեւ 2015թ. Հնդկաստանը սեփական ռազմական արդիականացման ծրագրերի վրա կծախսի շուրջ 80 մլրդ դոլար:

Մասնավորապես, Հնդկաստանը ջանքերը կենտրոնացրել է իր ռազմածովային հզորության վրա, որը դարձել է մրցակցության նոր եւ չափազանց կարեւոր ոլորտ: Գալիք 20 տարիներին Դելին ծրագրում է 103 նոր ռազմանավերի, այդ թվում՝ ականակիրների եւ ատոմային սուզանավերի վրա ծախսել գրեթե 45 մլրդ դոլար: Համեմատության համար՝ չինական հատկացումներն այդ նույն ժամանակահատվածում պետք է կազմեն մոտ 25 մլրդ դոլար, եւ այդ միջոցները կուղղվեն 135 նավերի ձեռքբերմանը: Այս երկու երկրների վերաբերյալ տվյալներն իր վերլուծությունում ներկայացնում է AMI International ընկերությունը:

Պակիստանի հետ հարաբերություններում լարվածությունից, քաշմիրյան անջատողական գրոհայինների ու մաոիստ ապստամբների շարունակական գործողություններից բացի, Հնդկաստանի զինվորական ղեկավարությանն ավելի շատ անհանգստացնում է Չինաստանի հետ ռազմական գործողությունների սկսման հնարավորությունը, որի պատճառով էլ նա այդքան էական չափով շեշտը դրել է ռազմածովային հզորության մեծացման վրա: Միացյալ Նահանգներին առայժմ Հնդկաստանի ռազմական հավակնություններն անհամեմատ ավելի քիչ են հուզում, քան չինական նկրտումները: Պենտագոնի 2010թ. զեկույցում Հնդկաստանի՝ համաշխարհային գործերում (այդ թվում՝ Հնդկական

օվկիանոսի գոտում) ազդեցության աճի մասին հնչեց դրական արձագանք: Սակայն կան նաեւ որոշ տագնապալի նախանշաններ, որոնք վկայում են, որ վերելքին գտնվող այս երկու գերտերություններին տարածաշրջանում կարող է տեղը չբավականացնել:

Օգոստոսին անհայտ չինական ռազմանավը Վիետնամի ափերին մոտեցել էր հնդկական դեսամտային նավին, եւ հրամանատարը պահանջել էր բացատրել չինական ջրեր (հանդիպումը տեղի էր ունեցել Յարավչինական ծովի վիճելի հատվածում, որին հավակնում է Վիետնամը) հնդիկների մուտքի պատճառը: Փառք Աստծո, ամեն ինչ անցել էր, եւ կողմերը սահմանափակվել էին բոլոր երեք երկրների պաշտոնատար անձանց մի քանի կտրուկ հայտարարություններով: Սակայն դա եւս մեկ նախանշան է, որ Ասիայի ծովային տարածքները դառնում են էլ ավելի ռազմականացված:

«Նոր Եվրոպան» դադարել է սիրել Եվրոն

Բոլորն այժմ խոսում են հույներից եւ իտալացիներից, որոնք լրջորեն մտածում են համաեվրոպական արժույթից հրաժարվելու մասին՝ հօգուտ հին ու բարի դրահմայի ու լիրայի: Սակայն իր տասնամյակը մշտն Եվրոյի համար առավել տագնապալի ազդանշան կարող է լինել այն հանգամանքը, որ արելեւեվրոպական երկրները, որոնք երկար տարիներ ձգտում էին մտնել Եվրոպայի արժութային միություն, այսօր այդ առիթով սկսում են խորհել:

Յունվարի 1-ին Էստոնիան դարձավ Եվրոյի անցած 17-րդ երկիրը: Բայց նրան ընկերակցել այժմ երկար ժամանակ ոչ ոք չի ցանկանա: Լեհաստանը Եվրոգոտի պետք է մտնե՞ր 2012թ., սակայն հետաձգեց իր մուտքն անորոշ ժամանակով: Ապրիլին Բուլղարիայի աջակենտրոն կառավարությունը հրաժարվեց 2013թ. Եվրոգոտի մտնելու ծրագրից՝ այն բացատրելով առավել մանրակրկիտ նախապատրաստվելու անհրաժեշտությամբ: Ռումինիայի նախագահը նույնպես հայտարարեց, որ իր երկիրը կարող է Եվրոգոտի մտնելու ժամկետները «մեկ-երկու տարով» հետաձգել: Լատվիան ու Լիտվան հաստատակամորեն մտադրված էին հետեւել Էստոնիային եւ դառնալ Եվրոյի երկիր, բայց այժմ ասում են, թե մուտքի ժամկետներն անիրատեսական են: Իսկ լիտվական կենտրոնական բանկի ղեկավարը նախազգուշացրեց, որ ԵՄ անդամակցությունը բնավ էլ Եվրոյին անցնելու պարտավորություն չէ՝ «ընդունի՛ր կամ մեռի՛ր սկզբունքով»:

Սրանից ընդամենը երկու տարի առաջ Եվրոգոտուն անդամակ-

ցությունն ամեն կերպ գովաբանում էին՝ համարելով այն Արեւելյան Եվրոպայի երկրների պարտքային խնդիրների եւ հոգսերի լուծում: Անգամ հրապարակայնության սեփականությունը դարձած Արժույթի միջազգային հիմնադրամի զեկույցում կար հանձնարարական՝ արագացնել սույն գործընթացը, քանզի «Եվրոհզացիան», իբրեւ թե, ոչ միայն ընդունակ է օգնել պարտքային խնդիրների լուծմանը, այլեւ նշանակում է «անորոշության վերացում եւ վստահության վերականգնում»:

Սակայն այժմ այդ երկրները շատ մտահոգ են եվրոյի «զսպաշապիկով», որը հազգված է արժութային միությանն այն պահին, երբ տուժած եվրոպական տնտեսությունները փորձում են վերականգնվել:

Տրամադրությունների ու կարծիքների փոփոխություններն այն երկրներում, որոնք ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը ժամանակին կոչել է «նոր Եվրոպա», եւ որոնք վաղուց ձգտում էին եվրոպական ինտեգրման, նույնքան սրընթաց են, որքան անսպասելի: Այսօր ԵՄ ակումբին անդամակցությունն ամենեւին էլ այն չէ, ինչ որ նախկինում էր:

Մեքսիկական թմրապատերազմը տեղափոխվում է հարավ

Թեեւ Մեքսիկայի հյուսիսային սահմանի մոտ թմրակարտելների գործունեության հետեւանքով բռնություններն ԱՄՆ-ում դարձել են կարեւոր քաղաքական խնդիր, անհամեմատ քիչ ուշադրություն է հատկացվում այն աղետալի հետեւանքներին, որ տվյալ կոնֆլիկտը թողնում է հարավում գտնվող երկրների վրա: Թմրամաֆիան՝ ի դեմս «Սինալոա» եւ «Ջետաս» կարտելների, նոր տարածքների որոնումների եւ մեքսիկական իշխանությունների սաստկացող հետապնդումներից խուսափելու պատճառով, հիմնավորվում է անկայուն քաղաքական իրավիճակ ունեցող Կենտրոնական Ամերիկայի պետություններում:

Այսօր արդեն Կենտրոնական Ամերիկայի բոլոր երկրներն են Սպիտակ տան կողմից մտցվել թմրանյութերի տարանցիկ պետությունների ցանկը, քանզի ընթացիկ տարում այդտեղ մտան Բելիզն ու Սալվադորը: Մեքսիկայի միջով Միացյալ Նահանգներ ներթափանցող կոկաինի 60 տոկոսը սկզբում անցնում է Կենտրոնական Ամերիկայի երկրներով, որի մասին տեղեկացվում է Կոնգրեսի հետազոտական ծառայության զեկույցում: Երկրների այդ յոթնյակից չորսում սպանությունների քանակը վերջին հինգ տարիներին էապես ավելացել է: Հոնդուրասում այդ ցուցանիշն աճել է ավելի քան երկու անգամ:

Սայիսին Գվատեմալայում տեղի ունեցավ 1996թ. քաղաքացիական

պատերազմի ավարտից հետո ամենասարսափելի սպանող, երբ թմրամաֆիայի հրոսակախմբերը երկրի հյուսիսում գլխատեցին 27 մարդու: Այժմ իր մեծությամբ երկրորդ մեքսիկական թմրակարտել «Ջետաս»-ի իշխանության տակ, ըստ էության, գտնվում են ամբողջ շրջաններ: Այդ կազմակերպությունն իր զինանոցում ունի գնդացիներ, ձեռքի նռնականետեր եւ անգամ ջունգլիներում կառուցում է թռիչքավայրեջջային ուղիներ: Գվատեմալայի կառավարությունը տարեսկզբին մեքսիկական թմրակարտելների դեմ խոշոր հարձակում անցկացրեց, սակայն իր տարածքից նրան վճռել այդպես էլ չկարողացավ: Ջանգվածային հաղորդագրություններ հայտնվեցին, թե գվատեմալացի շատ քաղաքական գործիչներ այդ հրոսակախմբերից կաշառք են ստանում կամ որեւէ այլ ձեւով մասնակից են թմրակարտելների գործունեությանը:

Առայժմ կոկաինը վերամշակում են գրեթե բացառապես այնտեղ, որտեղ աճում է կոկան՝ հարավամերիկյան Անդերի շրջանում: Սակայն մարտին հայտնաբերվեց Կենտրոնական Ամերիկայում կոկաինի պատրաստման առաջին լաբորատորիան: Այն գտնվում էր Յոնդուրասում: Սալվադորում, որտեղ նույնպես դիտվում է հանցագործության կտրուկ աճ, «Սինալոա»-ն եւ «Ջետաս»-ը տեղի հրոսակախմբերի հետ կազմել են դաշինքներ, որոնցից է տխրահռչակ «Մարա Սալվատրուչա»-ն:

Պակիստանի մյուս պատերազմը

Բելուջստանը Պակիստանի ամենամեծ նահանգն է, որը զբաղեցնում է երկրի տարածքի գրեթե կեսը: Սակայն այդ տարածաշրջանի անջատողականների պայքարին (որը, երբեմն, անվանում են պակիստանյան գաղտնի պատերազմ) հատկացվում է ուշադրության սոսկ չնչին մասը, որ դարձվում է երկրի մյուս ճգնաժամերին: Անջատողական խմբավորումները, որոնցից խոշորագույնը Բելուջստանի ազատագրության բանակն է, 2007-ից պարտիզանական պայքար են մղում Իրանի ու Աֆղանստանի հետ սահմանակից եւ օգտակար հանածոներով հարուստ տարածաշրջանում: Այն բելուջների՝ 1947թ. Պակիստանի անկախության ձեռքբերումից հետո հինգերորդ ապստամբությունն է: Եվ անգամ այդ երկրի չափանիշներով՝ Բելուջստանի նահանգն էլ ավելի է դուրս գալիս կենտրոնական իշխանության վերահսկողությունից:

Բելուջստանի գրոհայինների ամենաշատ հարձակումները (պակիստանյան բոլոր նահանգների մեջ) դիտվել են 2010թ.: Այս միտումը պահպանվել է նաեւ 2011թ.: Գրոհայինները բազմիցս կազմակերպել են պայթյուններ հիմնական զազատարների վրա, սպանել Փենջաբից այդ

տարածաշրջան տեղափոխված նորաբնակներին, ինչպես նաև վերացրել մի քանի քաղաքական գործիչների եւ նավթային ընկերությունների աշխատակիցների:

Պակիստանյան իշխանությունների պատասխանը ոչ պակաս կոշտ էր: Human Rights Watch-ի (HRW) զեկույցում նշվում է, որ հունվարից մինչև հունիս այնտեղ սպանվել է 150 մարդ: Հիմնականում դրանք երիտասարդներ էին, որոնք ակտիվորեն մասնակցում էին բելուջների անջատողական քաղաքականությանը: Մարդկանց սպանություններով եւ առեւանգումներով գործողությունները, ամենայն հավանականությամբ, իրականացնում են պակիստանյան հատուկ ծառայությունները: Ասիայի գծով HRW տնօրեն Բրեդ Ադամսն այդ դաժան գործողություններն անվանեց «անօրինական եւ էժանագին սպանություն»՝ հայտարարելով, որ դրանք «պակիստանյան իշխանությունների՝ իրենց զինվորականներին ու հատուկ ծառայություններին վերահսկելու պատրաստականության եւ ընդունակության» առիթով կասկած են հարուցում:

Անկայունությունը Բելուջստանում ունի միջազգային հետեւանքներ: Թալիբները, որոնց կենտրոնակայանը տեղակայված է այդ նահանգի մայրաքաղաք Քվետայում, Բելուջստանի 1300կմ երկարությամբ սահմանն օգտագործում են Աֆղանստան գաղտնի ներթափանցելու համար: Այդ նոսրաբնակ տարածաշրջանը նաև դարձել է թմրանյութերի առևտրականների եւ Իրանի ապստամբական խմբավորումների հուսալի ապաստարան: Ասում են, թե Բելուջստանի իր հենակայաններից ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունն իրականացնում է անօդաչու թռչող սարքերի գրոհներ: Եվ, անշուշտ, կա նաև Հնդկաստանը, որին Պակիստանը բազմիցս մեղադրել է ապստամբներին ֆինանսավորելու մեջ: Հնդկաստանն այդ մեղադրանքները պարզապես մերժել է: Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների կազմակերպիչ Խալիդ Շեյխ Մոհամեդը ծնունդով Բելուջստանից է, ինչպես եւ նրա ազգական Ռամզի Յուսեֆը, որը 1993թ. կազմակերպել էր Առեւտրի միջազգային կենտրոնի պայթյունը:

Ծովահենությունը դառնում է գլոբալ

Սոմալացի ծովահենները 2011թ. պատրաստ են նոր ռեկորդ սահմանել՝ հոկտեմբերի դրությամբ իրականացնելով 199 գրոհ, մինչդեռ 2010թ. այդ նույն ժամանակահատվածում դրանք 126 էին: Դժբախտաբար, ժամանակակից ծովահենությունը, որը, ինչպես երեւում է վերջին տարի-

ներին, հաջողությամբ ստացվում է սանձահարել, բացառիկ երեւոյթ չէ՝ սահմանափակված սոմալացի ծովահենների կողմից սեփականաշնորհված Ադենի ծոցի աշխարհագրական շրջանակներով: Ծովահենությունը կրկին դառնում է գլոբալ եւ մասշտաբային:

Ծովահենների համար նոր ամենաթեժ կետը դարձավ Արեւմտյան Աֆրիկան, ուր նավթի խոշոր պաշարներ ունեցող Գվինեան այս տարի բախվեց գրոհների հզոր ալիքի: Եթե 2010թ. Բենինի ափերին ոչ մի հարձակում չէր եղել, ապա 2011թ. գրանցվեց 19: Վեց հարձակում կատարվեց Նիգերիայի ափերին եւ երեքը՝ Գանայի: Միաժամանակ, շատ գրոհների մասին պարզապես չի հայտնվում: Հոկտեմբերին Նիգերիայի ու Բենինի նախագահներն անցկացրին տարածաշրջանի պետությունների ղեկավարների առաջին գագաթաժողովը՝ նվիրված ծովահենության խնդիրներին:

Հարավաֆրիկյան ծովահեններն իրենց գործողություններում առավել ավանդական են, քան նրանց սոմալացի գործընկերները: Նրանք սովորաբար թալանում են նավաբեռը, այլ ոչ թե առեւանգում են նավերն ու անձնակազմին՝ փրկագին ստանալու նպատակով: Նավաստիներին կապկպում են, ծեծում խզակոթերով եւ մտրակում հոսանքալարերով: Որոշ դեպքերում ողջ անձնակազմին սպանում են: Եթե Սոմալիի ծովահենությունը հաճախ դիտում են որպես երկրի անկայունության հետեւանք, ապա Գանայի դեպքում, որն աֆրիկյան ամենակայուն եւ ամենախաղաղ ժողովրդավարություններից է՝ 2011թ. ՀՆԱ 13.5 տոկոս աճի կանխատեսումով, նույնը դժվար թե կարելի է ասել: Շատերը գտնում են, որ նավթային բուժը տարածաշրջանում ժամանակակից ծովահենների համար որպես խայծ է ծառայում:

Եվ նրանց գործունեությունը չի սահմանափակվում միայն Աֆրիկայում: Ինդոնեզիայի Առեւտրի միջազգային պալատն այս տարի հայտարարեց, որ ծովահենային գրոհների քանակը, սկսած 2007թ., հասել է ամենաբարձր մակարդակին: Նույնիսկ Պերուում, որտեղ ծովահենության մասին նախկինում գործնականում չէին լսել, այս տարի գրանցվեց հարձակում ճապոնական ձկնորսանավի վրա: Առհասարակ, ընթացիկ տարվա ինը ամիսներին աշխարհում կատարվել է 352 ծովահենային գրոհ: Սա ռեկորդ է: Նախորդ երկու տարիներին Միացյալ Նահանգները, Եվրոպան եւ անգամ Չինաստանը ծովահենության դեմ պայքարում կիրառեցին ռազմական միջոցներ: Սակայն, ինչպես տեսնում եք, հարձակումների թիվն աճում է:

Նոր ապառազմականացված գոտիներ Ասիայում

Մինչ աշխարհն այս տարվա փետրվարին լարված հետեւում էր Մերձավոր Արեւելքի իրադարձություններին, մի քանի հարյուրամյակ ձգձգվող տարածքային կոնֆլիկտն Ասիայի հարավ-արեւելքում կարճ ժամանակում վերածվեց իսկական պատերազմի. Կամբոջան ու Թաիլանդը մարտի բռնվեցին վիճելի համարվող կրոնական պաշտամունքի տեղի պատճառով: Այդ բախումը կարող է դառնալ անկայունության աճի նախանշան ողջ Հարավարեւելյան Ասիայի անհանգիստ տարածաշրջանում:

Այդ հարեւան երկրներն արդեն վաղուց վիճում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում ընդգրկված 11-րդ դարի Պրեա Վիհեա տաճարին տիրելու իրավունքի համար: Այս վեճի արմատները գնում են մինչեւ 20-րդ դարի սկիզբ, երբ անցկացվեց սահմանը Սիամի եւ այն ժամանակ ֆրանսիական Կամբոջայի միջեւ: 1962թ. ՄԱԿ Միջազգային դատարանը որոշեց, որ տաճարին տիրելու իրավունքը, որը սկզբում հինդուական էր, իսկ հետո դարձավ բուդդայական, պատկանում է Կամբոջային: Սակայն Թաիլանդը երբեք լիովին չի ընդունել սույն դատական վճիռը: Վերջին տարիներին Ափհիսիթ Վեթչաչիվան, որը 2008-ից մինչեւ ընթացիկ տարվա օգոստոսը զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը, «դեղին շապիկավորների» թայական ազգայնական շարժման ճնշման ներքո շիկացրեց իր ագրեսիվ ճարտասանությունը եւ հրամայեց այդ տարածաշրջան գործեր ուղարկել:

Փետրվարի 4-16-ը կողմերը վիճելի տարածքում բազմիցս հրետանային փոխհրաձգության մեջ էին մտել, ընդ որում՝ կողմերից յուրաքանչյուրը գնդակոծության սկսման մեջ մեղադրում էր հակառակորդին: Արդյունքում՝ զոհվեց 28 մարդ, իսկ հազարավորները դարձան տարագիրներ:

Հուլիսին ՄԱԿ-ը տաճարի շուրջը սահմանեց ապառազմականացված գոտի եւ հրամայեց երկու կողմերին հետ քաշել իրենց զորքերը: Ձինադադարի պահպանմանը հետեւում են ինդոնեզացի խաղաղարարները: Սակայն այս վեճն ինչ-որ մեկին ստիպեց հանդես գալ Հարավարեւելյան Ասիայի տարածաշրջանային կազմակերպության՝ ԱՍԵԱՆ-ի շրջանակներում խաղաղարար ուժեր ստեղծելու անհրաժեշտության մասին հայտարարությամբ: Լարվածությունը փոքր-ինչ թուլացավ Ափհիսիթ Վեթչաչիվայի պաշտոնաթողությունից հետո, որին վարչապետի պաշտոնում փոխարինեց «կարմիր շապիկավորների» կողմից սատարվող Յինգլաք Չինավաթը:

Թեև ճգնաժամն առայժմ մեղմացել է, բայց այն դարձել է Թաիլանդում (որը հանդիսանում է ահաբեկչության եւ թմրանյութերի առետրի դեմ պայքարում ԱՄՆ առանցքային դաշնակիցը) քաղաքական լարված պայքարի պատմության բազում դրվագներից սոսկ մեկը: Երկրում բազմիցս անցկացվել են գյուղացիների, հիմնականում՝ «կարմիր շապիկավորների» եւ թագավորին սատարող «դեղին շապիկավորների» լայնամասշտաբ, հաճախ բռնությամբ ուղեկցվող ցույցեր: Թաիլանդը նաեւ բախվում է հարավի իսլամիստ գրոհայինների ապստամբական շարժմանը, որին «Միջազգային համաներում» կազմակերպությունն այս տարի մեղադրեց քաղաքացիական բնակչության դեմ ռազմական հանցագործությունների իրականացման մեջ:

Foreign Policy

29.11.2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Յարությունյան	
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ	
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1
Ռուբեն Մելքոնյան	
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ «ԴԵՐՍԻՄԻ ԴԵՊՔԵՐԻ» ՇՈՒՐՋ 6
Արաքս Փաշայան	
ՍԻՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ`	
ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌԱՋ 11
Հայկ Գաբրիելյան	
ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 17
Սեւակ Սարուխանյան	
ԻՐԱՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 25
Արտաշես Տեր-Յարությունյան	
ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ	
ԱՐՏԱՔԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 30
Բենիամին Պողոսյան	
2011-Ի ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 36
ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀ 41

*Շապիկին պատկերված է
Թմբկաբերդը (Ջավախք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ ՕՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: